


**U H O T**

Ա Մ Ս Ա Գ Ի Ռ

# ԵՐԻԿՈՒ, ԲԵԼՈՎՅՈՒ, ԳՐԵԳՈՐՅՈՒ ԵՒ ՔՐԱՐՅՈՒ


ԱՐԹՈՒՐՈՒԹ ՏԱՐԵ  
ՀԻԳԼԻՆ ՄԻԾՄԱՅՑ



6600100910

Ե ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1873



የኢትዮጵያዊ ሚኒስቴር  
ቁጥር 6.

ՑՐՒՑԱՆ 30  
1873 •

## ԱՐԱԳԻՐ

Ա.ԶԳԱՅԻՆ, ԲՈՒՆԱՎԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՐԴՈՒՅ ՀՈԳԵԿԱՆ ՆԵՐԴԱՇՏԱԿ ԿՐԹՈՒԹԻՒՆ

3. **T**o **H**ip **S**

**Ա**ՄԵՆ կրթեալ ազգոց գաստիւ-  
րակներու գլխաւոր ջանքն է միշտ ներ-  
գաշնակ ու համահաւասար զարգա-  
ցրնել հոգւայն ամեն կարսդութիւն-  
ներն : Վրդէն յայտնի է , ինչպէս հին  
Յօյներն և Հռովմայեցիք այս նպա-  
տակաւ մասնաւոր գիտութիւններով  
պարապելէ զատ՝ կը յօդորէին մի և  
նայն ժամանակ երաժշտութիւնն եւ  
միւս գեղարուեստներն եւս ուսանիլ .  
կ'երեւի թէ հին Յօյներն երաժշտու-  
թեան շատ ժամանակ կը նուիրէին ,  
վասն զի Պղատոն իր խորհուրդը յայտ-  
նելով երաժշտութիւնն ուսանելու  
մասին կ'աւելցնէ , որ երեք տարիէն  
աւելի պէտք չէ այն նպատակի համար  
ծառայել , որպէս զի միւս գիտու-

թեանց համար կարեւոր ժամանակը  
ըստ պակասի : Տայց նոր ժամանակներու  
եւս լսւ կը ճանաչեմք ամեն հոգեւ  
ւոր կարողութեանց ներդաշնակ զար-  
դացնելուն սկզբունքը և ըստ այսմ ու  
ուռմն կը կտրդադրենք : Երաժշուու-  
թիւնն , բանատեղծութիւնն և գե-  
ղարտեստներն մեջ ամենաբարձր զա-  
ւարձութիւններն կը պարապատեն :

Այս պատճառութե բնաւ գարմա-  
նալի բան չէ խիստ աղքատիկ տօս-  
մէջ անդամ մի երաժշտական գործի-  
քի հանդիպելն , մանուկներն իրենց  
ուսումնարաննեն ազատ ժամերը և ի-  
րենց վաստակեալ ուղեղները հանգըն-  
տացնելով կ'անցնեն , այն ինչ նշցան ծը-  
նողըն դուարթ ու խաղաց երգոց մի-

աբանութիւնով ձայնակից կը լինին նուցա . | շրաժշտական ազնիւ ու վեճմղուարձութիւններն չեն միայն , որք իը գրգռեն երաժշտութիւնով պարապելու . ուրիշ պատճառներ եւս կան , - ՚ լորա միջոցով կը զարթնուն , կը սնանին և կը զարգանան մեր միտքն ու . հոդին , որպէս զի ապահով ապաստանարան կարողանան դառնալ ամէն գիտնալու արժանի բաներուն . ահա սոքա բաւականին կարեւոր պատճառներ են ծնողաց համար իրենց զաւակներն մի որ և իցէ երաժշտական գործիքով զբաղեցնելու , թէ և մինչեւ մի որոշեալ կրթութեան աստիճանի : Վէտք չէ միշտ ճարտար երաժիշտներ դարձնել իւրեանց որդիքը , միայն թէ երաժշտութիւնով զբաղողն բանաստեղծութիւնն և միւս գեղարուեստներն եւս աչքէն թողնելու չէ , եթէ նորա նպատակն հոգւոյ կարողութեց համաձայն և ներդաշնակ կրթելն է . Իր ամբողջ կեանքն շարունակ ու անդադար վերացական գիտութիւններով և ժամանակ առ ժամանակ երաժշտութիւնով պարապող անձը՝ երեւի անշուշտ իրեն բազմիցս ստիգուածէ տեսնել իւր ուսման սեղանէն դէպի դաշնամուրն վազել , և ապա անտի կրկին իր ուսումնական գրքերը դառնուլ . Ո՞րդոյ վեց ամբողջ ժամեր Փի լիսովայութեան , Ո՞րտիմատիկայի , իրաւաբանութեան , Աստուածարանութեան դաւառներու մէջ թափուելն և բոլորավին վաստակելն ետքը՝ այնպէս որ նորա հոգւոյ գործարանները իրենց ծառայութիւնն մատուցանել կ'ուրանան և նորա ըմբը ըսողական եւ դասողական կարողաւթիւններն իրը խիստ քաղաքակուներով ծածկուած խաւարիմէջ տատանուելու կ'սկսին թողարկուել փորձէ նա այն ժամանակ մի փորդ երաժշտել , կամ թող-

լու որափ խոր ծալքերն թափանցակ մի երգ , եւ նա կը գտնէ ինքնողինքն շուտով վերակենցաղացեալ , իրեւեւելքորական ուժով զարկուած . եւ կըզգայ իր մէջ ամենեւելն նոր կարողութիւն կրկին երկար ժամեր ու ուղղ պարապմանց համար : Ո՞յս տեսակի վոր խաղարձութեանց միջոցով կարենի է օրն 14 ժամ ուսանիլ առանց ծանր վաստակեալ լինելու : Կ'ըժանապատիւ Ռուագոյ բնագետին կարծիքն ըստ սրմին երբէք արհամարհելի չէ . ըստ որոյ օրն 14 ժամէն քիշ պարապող սրումնականը ծոյլ ասուելու արժանի է , ինչպէս որ նա յաճախ այս բանը կը կրկնէր . Լու մի մարդ կը ճանաչեմ , որն որ շատ տարի ջարունակ եւ անխոնջ օրը 16 ժամ կ'ուսանէր և մինչեւ ճաշ ուտելու ժամանակ եւս կը կարդար ու կը գրէր , և մի և նոյն ժամանակ այնպէս ներդաշնակ , խաղաղ ու գեղեցիկ հոգւոյ դրութեան մէջ կը գանուէր , որ կարծես թէ նա ուրիշ երէ առաւ ել բարձր ու խոէալական հոգեւոր կեանքով կ'ապրէր և աշխարհիս ամէն մարմնական ու արտաքին անհամանութիւններն և հոգսերն նորա հոգին երբէք չէին շիոմել կամ պղտորիւ . Իր կենաց այս շղանիս մէջ բուն մոտած ժամանակ ևս իր ցերեկուայ մտածմունքները կը շարունակէր , եւ շատ անգամ նա այս դրութեան մէջ ամենագյուտ առ և մթին խնդիրներն կը լուծէր , արթուն կեանքի մէջ իրեն անհամանալի երեւոյթներու պատճառները պարզ ու ակներեւ կը ճանաչէր . Կրկին ընտրած նիւթիս դառնալով կը նկատեմ , որ երաժշտութիւնն չէ թէ միայն գիտնականաց դրայութեան օթարանի՝ հոգւոյ վրայ վազդէ , ու նորանոր գործուեկութելը գրգռէ , այլ եւս մի և նոյն ազգեցութիւնն յառաջ կը բերէ ամենա

աշխատաւորներու , հասարակ արհեստաւորներու , առողջապահ մարդկանց , իրաւագետներու , տնտեսական գործակատարներու , միով բանիւ ամեն կարգի մարդկանց վերայ :

Առաւտունեւ մինչեւ երեկոյ դիւ  
ւանատներու , պաշտօնատներու մէջ  
նստող անձինք շատ անգամ ծառայու-  
թեան գնալէն առաջ , կամ դառնա-  
լէն յետոյ բանաստեղծութեան , կամ  
երաժշուութեան մի քանի ժամեր կը  
նուիրեն . որպէս զի թմրութիւնն ցը-  
թելով և նոր կետնք ստանալով վաս-  
տակելի և յաճախ շատ ձանձրավի ըդ-  
բազմանց կրկին ձեռք զարնել կարո-  
զանան : Այս կարգի մարդիկ շատ  
տարաբազու պիտի համարէին իրենց  
անձը թէ որ միջոց ք գտնէին այս  
կերպ բանաստեղծական վայելու-  
թիւններով հանգստանալ . Ով որ կե-  
նաց զանազան հանգամանաց և դի-  
պոց մէջ դիտած և շատ անձինք ան-  
ձամբ մերձ ձնեալ ջանացած է , ան-  
շուշտ շատ անգամ պնդածս ապա-  
ցուցուած գտած է : Այնկատեմ մի  
և նոյն ժամանակ , որ շարունակաբար  
ամենավերացական ուսմունքներով ,  
կամ ամենաչոր պաշտօններով զա-  
ղուած անձինք ամենէն աւելի կարօ-  
տութիւն և հսկումն կզգան իրենց  
մէջ բանաստեղծութեան նահանգնե-  
րն շրջելու երբեմն երբեմն , երաժըւ-  
տութեամբ կամ բանաստեղծութիւ-  
նու կամ բանակացնող ներդաշնակու-  
թիւն ստանալու , որ մեզ իսկցն աղ-  
նուագոյն գոյութիւն կը պարգեւէ և  
ամենօրուայ կենաց դառնութիւննե-  
րն մոռցնել կը տայ . Այս պատճա-  
ռաւ օրական պարագն կատարելէն  
յետոյ թատրոններն , դաշնակութիւն-  
ներն (concert) մեզ երկրիս ամենա-  
քաղզը վայելութեանց մասնակից կ'ա-  
նեն , որք մեր հոգւցն ու մարմացն

կրկին նոր կեանք ու նոր հոգի կը  
բաշխեն նոր դործունեութեանց հա-  
մար :

Հատ մարդկանց հսկումն իրենց  
անձն ներդաշնակ կրթելու և զարգա-  
ցրնելու մասին այնչափ հղոր է, որ  
նա մարդու իւր միակողմանի ուղղու-  
թենէ ազատուլ և նորա անձնաւորու-  
թին ամբողջոցնող կողմն գտնել կազմա-  
տեցնէ : Ըստ այսմ կը տեսնեմք  
յաճախ ամենավերացական կամ մոռա-  
ւոր գործքերով զբաղուող անձինք, որք  
հակամն ունին, երբեմն մինչեւ անգամն  
նոցա համար կիրք գարձած է իրենց  
պարապ ժամերն բանասոե զծութքը  
կամ նկարչութեամբ զուարթացնելն :  
Իրաւագէտներու պաշտօնն կամ զբաղ-  
մունքն ամենէն վերացական և ամենա  
ձանձրավի յիշողութեան բաներէն մինն  
է . որ բանն է աւելի ձանձրավի եւ  
վաստակիցուցիչքան հին Հռովմայե-  
ցւոց օրէնքներն , Յուստիանոսի օրէ  
նաց ժողովածոյն ուսանելն եւ միտն  
պահելն : Եւ ահա այս հիմքով իրա-  
ւագէտներն համարեա թէ իրենց բռ-  
լոր պարապ ժամերն երաժշուութեան  
կը նուիրեն . հարիւր իրաւագէտնե-  
րէն հազիւ թէ մէկ հատ գտնուի ,  
որ երաժշուութեամբ չը պարապի .  
այս , շատ անգամ կարելի է նոցա  
մէջ նշանաւոր , ձարտար երաժիշտ-  
ներու (Virtuose) եւ նուագայարդա-  
րիչներու հանդիպիլ , անոնցմէ շատե-  
րոն իրաւագիտութեան հետ միա-  
սին ուսած են հիմնաւոր կերպով ե-  
րաժշուութիւն : Հռչակաւոր իրա-  
ւագէտ Տիրօն շատ հիմնաւոր և ա-  
մենագեղեցիկ գրքեր գրած է հին ե-  
կեղեցական երաժշտութեան վերայ ,  
միեւնոյն ժամանակ նուագներ ևս յար-  
դարած է : Գ . Ա էրինն , վերին դա-  
տաստանական ատենի խորհրդականն  
եւ կառլ . Ա . Ա էրէլմ հռչակաւոր

երաժշտի բարեկամն և ընկերն) գրեց երաժշտական ներդաշնակախօսութեն (Harmonie) իւր ժամանակի ամենագիտական սիստեմն, և յարդարեց նմանապէս շատ գեղեցիկ նուագներ:

Փիլիսոփաները արդէն ըստ իւրեանց կոչման պէտք է, որ մարդկային մաւաւոր կարողութեան ամեն կողմանց ծանօթանան նոցա վերայ փիլիսոփայութիւն անել կարողունալու համար՝ թէ և 'ի հարկէ պէտք չէ կարծէլ, որ նոքա ուրիշներէն առաւել մասնաւոր հակումն ունին երաժշտութեան համար. բայց ինչ և իցէ շատ զարմանալի է, երբ մի փիլիսոփայ ձարտարապետութեան ասպարիզի մէջնը շանաւոր գործքեր կրստեղծէ:

Վայսարհիս ամենավերացական կերպով մտածող փիլիսոփաներէն մին, չորսառու մատախմատիկասփիլիսոփայն, որ հոգւոյ ամեն արտայայտութիւնները (Function) մտացական կերպով հաշուեց և մի մատիմասայիցական սիստեմի վերայ հիմնեց, ամենաջերմ եւսանդունակները յարդարել ուսաւ, ու շատ նուագներ տպագրութեան մի լոցով ՚ի լոյս ընծայեց:

Վ. յս փաստերէն կը տեսանեմք, որ մարդկային հոգին երկար ժամանակ վերացտիկան մտածմունքներով դրացուելէն յետոյ կրկին զգացողական կերպի մէջ պիտի մտնէ. մարդո ինչ պէս մինակ վերացական, նոյնպէս եւ մինակ զգացողական կեանք վարել չէ կարող. ընդհակառակն պէտք է այս երկու հոգեկան գործունէութիւններըն միասին նորա գոյութեան ճշմարիտ արքրն կաղմէն:

Ուրդիկ մի միայն միակողմանի մը տաւոր զարդացման ու միակերպ կենացաղվարութեան տէր՝ զուրի զգաւ յարանաց օմարանի ներդաշնակ վարդացմանե, բարուց մոլուսած և երեւմն

խորիծ և ծաղրադի խմաստակ յատկութիւններ ցոց կոտան. յս կերպ միակողմանի սպիտակուններ, չիմաստուն իմաստուն ասուած անձինք, շատ անդամգիտնաւ կաններու դասին մէջ անդամ կը գրանենք որք միայն գիտութեան մի ճիւղով կը պարապին և իրենց ամբողջ ժամանակը նորան կը նուիրեն միայն ՚Եպահ համար այն մասնաւոր գիտութեան սահմանափակեալ ճիւղէն աւելի բան չըկայ աշխարհի մէջ, կուզեն միայն իրենց ճիւղին պատկանեալ նորութեան հետ ծանօթանալ. ՚Եպահ տեսակ միակողմանի ու զարմանալի բարուց և վարուց տէր մարդկանց յաճախ կը պատահինք ամեն դասերու մէջ, նորա աշխարհի ամենախնդիրատակ անձինքները կը կազմէն, և ոռման կամ նորավեպներ (nouvelle) գրով ըստաւ անդներուն շատ ցանկալի նիւթեր կը մատակարարեն իրենց ամբողջ անձամք թէ ևւ փառը Վատուծոյ, որ այս տեսակ սբանչելի արարածոց թիւը որ տւուր կը պահասի. վասն զի մեր այժմեան կենաց շրջանը մանկութենէ սկսած մինչեւ ՚ի ծերութիւնագան կը ծաւաւտի և ուսումնական կրթութիւնն մեզ զէտ ՚ի բազմաթիւ գիտութեց կողմերն կը շրջիցնէ, որով բարուց միակողմանի զարդացման կանխաւ ապահով արդեն կը գրուի. Բայց ՚ի այս ուսուումնարանական կրթութիւնն մեր այսօրուան անթիւ դրագիրներն ու օրական թիւքերն որ և իցէ միու կողմանուոր զարդացումն կը խափանն: Վեր այժմեան ամենաումեծ կարեւորաւթեանց մէկն եւս ամեն արժանի գիտելիաց հետ ծանօթանալի և ուստի և շատ սիրով կը կարդացուեին գիտութեանց ամեն յառաջնորդ զիմութեան հետեւանքներն մողովերդական լեզուով ու հետաքրքրիչ ոճով զրաւած օրադիրներն, մէջ բաւական

նութիւնով կը կարդան թէ ինչպէս  
քիմիկոսները հոգէն մի բոլորովին նոր  
արծաթափայլ մետաղ, կամ ասողաւ-  
բաշխներն մի նոր մոլորակ կամ գիսա-  
ւոր աստղ են գտած և այն, Ո՞ի եւ  
նոյն օրագրի մէջ կը տեսնե՞ք մի սի-  
րուն տաղաչափութիւն, կամ մի ըլ-  
մայլեցուցիչ երաժշտական գործքի նը-  
կարագիրն տպուած, այո՞, մի նոր յօ-  
դուած ապագայի երաժշտութեան կամ թէ սպառնալի կրեափկայ երգ-  
մարեկ քաղաքականութեան վերայ  
մինչեւ շախ խաղն, այսինքն չէ թէ  
միայն մարդկանց հետ, այլ վաղոսկը-  
րեայ սպառկերներավ, շտութերթե-  
րու մէջ խօսակցութեան արժանի կը  
համարուի: Արավիշետեւ խաղին վերայ  
ինկաւ խօսք, կուղեմ մի քանի բան  
ասել մարդուս խաղալու հակման կամ  
ցանկութեան մասին, որոց վրայ Շիւ-  
լու իր և Վարդուս Վասէտիքական  
կրթութիւն ասած նամակներու մէջ  
բաւականին մանրա համարէն կը խօսի:  
Խաղն եւս հնարուած է իրքեւ մոր-  
դու հոգեւոր կեանքիներդաշնակ զար-  
գացման կարեւորութիւն, ամենտ  
վարենի ժողովրդներէն մինչեւ ամե-  
նակրթեալ ազգերն, մանուկներ եւ  
ծերեր կը խաղան մտաւոր հանգը-  
տութեան նպատակաւ, որչափ մի  
ժողովրդեան մտաց մշակութիւնն բար-  
ձոր է, նոյնչափ եւս հետաքրքիր ու  
ճարտար են նորա խաղերը: Օքական  
սպարքն հատուցանելէն յետոց, նո-  
քա եւս կուրախացնեն մարդոյ սիր-  
ուր և հագւոց գործունեութեան մէջ  
ներդաշնակ հաւասարակռութի յա-  
ռաջ կը բերեն: Վայց թէ երբեմն  
շատերը իրենց ծուլութեան իշխել ըլ-  
կարողանալով խաղն իրենց կենաց գըլ-  
խաւոր նպատակն շնչած են, ու խաղն  
և շահասիրութեան կրից գերի դար-  
ձած գիշեր ցերեկ խիենց թանկագին

ժամերն խաղի սեղանին մօտ կ'անցնեն  
եռանդու կրթերով. այլ եւս միակու-  
մանի հոգեկան զարդացման ու ան-  
կանոն կեցաղափարութեան հետեւ-  
անքն է: Պեղին մի գիշեր թուղթ  
խաղալու մէջ 40.000 թալէռ (մէկ  
թալէռ մօտ 4 ֆուանք) կորսնցնող թա-  
գաւորացն հաստատեց, որ ներդաշ-  
նակ կրթուած մարդկանց թիւը չը  
հաշուիր, և այս Բնչպէս կարելի է,  
երբ մէկը ամեն օր մեծամեծ ճաշե-  
րու, և պարերու այցելութիւնն կա-  
նէ. գատարիկապրոտութիւնն, շատ  
ուտել խմելն և սակաւ կամ ոչ մի տե-  
սակ մտաւոր զբաղմունք միշտ մարդո  
գէպ ՚ի խաղի յանցաւոր կողմերը կը  
մոլորյնեն. Թէ այս կրթով խաղան Բնչ  
թշուառութիւններ յառաջ բերած  
է և իւրաքանչիւր օր կրկին նորանոր  
զոհեր կը պահանջէ, արդէն ամենուն  
յայտնի է: Վայ. հաստատ և ապա-  
հով կարելլէ նկատել, որ մարդկային  
ամեն սովորութեանց աղբիւրն, որոց  
սահմանն կ'անցնուի և շատ անգամ  
յանցաւոր կիրք կը դառնայ, միակու-  
մանի կենցաղափարութեան մէջ որո-  
նելու է: Ու Բնչ չը քննող, կամ թէ  
միայն զուարձութեանց ետեւէն ինկ-  
նող, այս ճաշէն այն ընթրիքն, այս  
տօնախմբութենէն այն սպարահանդէսը  
վաղող. Քիչ կարդացող և բիչ մտածող  
մարդիկ, զուարձակի կեանք վայելելէն  
աւելի նպատակ կամ մտածմունք ցցց  
չեն տուած. և այս սպատճառաւ շա-  
փէն գուրս վայելելու սէր ստանալով՝  
վերջապէս իրենց յանցանաց ստրուկ  
կը դառնան: Այրբ այս տեսակ մար-  
դիկ իրենց կրից անգունդն գեռ բո-  
լըրովին չեն խորասուզուած և բաւա-  
կանին իրենց անձին վերայ իշխելու  
ոյժ ունին, իրենց կամքին տէր դառ-  
նալու, շատ անգամ վիրենք կը բժը-  
կեն մի Բնչ և իցէ յարմար մտաւոր

պաղմունքով . այժմ մատոր զուարձութիւններն ստորին մարմնական բաւականութիւններէ բարձր ու ազնիւհամարելով . իսկ ընդհակառակն իրենց ախտազի կրից ու սովորութեանց բոլորին հպատակի գարձածներն կամայակամոյ իրենց ընտած մոլար շաւի զով կ'երթան և մի միայն ուրիշ զօրութիւն պէտք է լինի , որ զանոնք կորստեան անդնդէն կարողանայ ազատել :

Յաճախ մի կիրքն այնպէս կը սաստկանայ , որ նա միւս բոլոր հոգեւոր կարողութեանց կիշխէ անպայման : Աւտի մարդոյ ամենամեծ խնդիրն ինքզինքը ճանաչելն ու իրեն իշխելն է :

( Ը լ ո ւ ն ա վ է լ :

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵԽ ՀԱՆԴԵՍ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Կերկայ ամսոյս 14 էն սկսեալ մինչեւ 26 Ս . Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարանի տարեկան Հարցաքննութիւնը տեղի ունեցաւ , ուր իւրաքանչյուր օր զանազան անձինք ուստամասիրար ներկայ գտնուելով՝ հարցաքննեցին աշակերտները , որոց ամենուն շնորհակալ ըլլալ քաղցր պարտաւորութիւն կը համարեմք : Մասնաւորապէս շնորհակալութեան արժանի են , Գեր . Կարապետ և Ամենա Եպիսկոպոսներն . Արք . Ներքէս և Ղուկաս վարդապետներն , որք գրեթէ շարունակ հարցաքննութեան սիրուէն մինչև ցաւարտ ներկայ գտնուեցան . նշանպէս Տեղոյս Ռիւշիէի Տեղորէն գաատու Խաս էֆէնտին , որ յատկապէս հրա-

լիրուած էր Տաճկերէնի օրը եւ հեռագրատան գործակալ Մեծ . Ս . Գրիգորեան և Աղէքսանդր էֆէնտիններն ու քաղաքացին Պարտ այի Պ . Յ սրութիւն Թորոսէան , որը բարեհաջն ներկայ գտնութիւնը հարցաքննել աշակերտներն է Տ սճկերէն և Գաղղիարէն լեզուաց քննութեան օրերն :

Թէ որչափ յաջողակութեամբ կը պատասխանէին աշակերտը և կամ ինչ արժէք ունին իրենց տարեկան աշխատասիրութեան մէջ , այս առթիւ բան մի չեմք ասեր , այլ ՚ի գիտութիւն համայն ընթերցող ազգայնոց և ծնողաց հարկ կը համարիմք Հանդիսիս վերջը դնել աշակերտաց ըստ հարցաքննական պատասխանատութեան և ըստ աշխատասիրութեան ունեցած արժէքն ներու ցուցակն :

Իսկ ամսոյս 28 ին ՚ի տօնի երանաշնորհ Ս . Թարգմանչացն մերաց Ապահայ եւ Մեսրովուաց , Պարգեւաբաշխութեան հանդէնն կատարուեցաւ . ուր բաց ՚ի Ս . Աթոռոյս Ամե . Ս . Նախագահէն և Արք . Միաբան հոգրերէն , ներկայ էին Վում . Քննիչ Զիվէր պէյը . քաղաքիս դատաւորը , Միրալայ պէյը և Ռիւշիէի գործոցին Տնօրէն դասատու Խաս էֆէնտին , նոյն պէս մի քանի համազգի Մեծ . Էֆէնտիններ :

Հանդեսին մէջ ճառեր կարդաց ուեցան Հայերէն , Տաճկերէն և Գաղղիարէն . Հայերէն ճառ կարդացողն է Յոհաննէս Խաչատուրեան Մէլիտինէցի , որոց ճառը ՚ի ստորեւ պիտի գնեմք ՚ի քաջալերութիւն , Տաճկերէն կարդացողն էր Կարապետ Թովմասէան Զանադ – Գալեցին . իսկ Գաղղիարէն՝ Գէորգ . Յ . Յարութիւննեան Խանուցին , Յետ ճառախօսութեանց՝ իւրաքանչյուր աշակերտի արժանեաց համեմատ կանխաւ որատրատուած միք-

շանակներն բաժխուեցան, յետոյ Վ. Ա. սեմափայլ Զիվէր Պէյը ոտքի վերայ ելլելով՝ համառօտ ատենաբանութեամբ շնորահակալութիւն յայտնեց.

Այսուհետեւ Ս. Պարիսաբբն յատուկ բարեմաղթութիւն ընելով Օդուտափառ. Կ յսեր կենաց, հանգեսը վերջացաւ :

### ԱՌԱՔԵԼԱՇԱԽԻԴ. Ս. ՀԱՅՐ

ԵՒ ՅԱՐԴՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Այսօր ամեն ձշմարիս Հայ իւր սրաիս մէջ նոր եռանդ և նոր ուրուխութիւն մը կ'զգայ. այս օրուան յիշատակը քաղցր է ամեն անոնց սրտին՝ որք իրենց հայութեան վերայ կը պարծին. նորա պարտաւորութիւն կ'զգան շնորհակալ լինիլ երկու Բարերարներէ, որք արիական անվշատ ջանիւք Հայութեան հիմնները անյողդողդ հաստատութեան վրայ խարսխեցին. սոյն քաղցր պարտաւորութիւնն է, որ զիս ալ կ'ըստիպէ բարձրանալ յայս բեմ բանախօսութեան, և թէպէտ տիկար՝ քայց սրաիս խորերէն բղսած խոպերով նը վրել իմ և ընկերակցաց երախտագիտութիւնը անզուգական Հարց, Սահ սկայ և Մեսրովեայ, յիշելով նոցա երախտիքը, որ զիսաւոր շորժասիթէ սոյն հանգիսիս, յորում աշակերտելոց Պարդեւաբաշսութիւնն ալ կը հաստարուի անոր համար որ՝ սոյն անզուգական Հարք բայցին մեր առջեւ գիտութեան ձանապարհը :

Վսեմախոհ հանգիսականք, արդարեւ սյաօր ամեն Հայ անուն կրող անհատ պարտաւոր է յայսնել իւր երախտագիտութիւնը : Երախտագիտութիւնը ամենազնիւ զգացում մի է, որով մարդ կարող է շնորհաց արժանանուլ և պատուել երախտաւորը : Պարագ դրած է մեր վրայ

Աստուած սիրել և յարգել մեր Բարերարները, նոյցա երախտիքը չեւ ունեալ և զանոնք յիշելով նոյցա հետեւող լինիլ : Պարտաւոր եմք մեք մեր ծնողներէն անմիջապէս վերջը սիրել մեր Բ սրբարները, վասն զի բնչպէս ծնողք, նոյնպէս և բարերարը մեր թէ մարմնաւոր և թէ հոգեւոր կենաց պատճառ են, երբեմն ազատելով զմեզ վաղահաս մահուան անողորմ ձիրան, ներէն կեանք կուտան, երբեմն մեր անձի համար պատրաստուած շարիքները մեզ զեկուցանելով կը զգուշացրնեն, երբեմն զմեզ անհաւատութենէ, թէրամտութենէ և յուսահատութենէ դարձնելով 'ի հաւատու, 'ի կատարելութիւն և 'ի յցս հաստատելով, երբեմն մեր անգիտութեամբ իբրեւ բարիք ընտրած շարիքնիս իմացրնելով և մեզմէ 'ի բաց մերմելով ըգ մեզ ապագայ վոտանգներէն կազատեն :

Վերջապէս կը գտնուին նաև այն տեսակ ընակիր բարերարներ, որ ամբողջ աղդ մը երախտապարտ կը կացուցանեն, որոց յիշատակը օրհնութեամբ հոչակել նուիրական պարտք է ձշմարիս Հայու, կամ թէ ըսենք, աղնուամիրամարդութիւնը բնական զգացումնեպէտք է լինի, և բանական խորհրդով ու կա, մօք պէտք է նուիրել ամեն պարտուագացած մեծարանք : Հարկ չէ մեզ խօսիլ այնպիսի անորման անձանց վրայ, որք կամ երախտագիտութեան պարտքէն աղաստելու համար կամ մեծամտութեամբ, կամ հախանձով այլոց բարի արարքը չոր կը մեկնեն եւ կը պարսաւեն, այսպիսիք մեր այսօրեայ խօսակցութեան նվաթ լինելու անարժան կը համարիմք, որոց պարաւոք չեմք ուզեր մեր ուրախտութեան առթիւն հետ խառնելով տխուր զգացմանց պատճառ տուլ : Ձշմարիս երախտա-

գէնըր բարեսրտութեամբ կը մեկնէ իւր բարերարի ազգօդուտ գործքերը եւ ընդհանրութեան մէջ յայտնելով իւր շնորհակալութիւնը, կը յարդորէ նա և զայլ, որ թէ նոցա պէս բարիք ընկելու ջանան, եւ թէ բարերարաց երախտագէտ լինին։ Ահա սոյն երախտագէտի օիրուն ունի մեր Հայ Ազգն ալ, նա այն առաջնորհներէն չէ, որը կ'անարգէն իրենց բարերարի յիշատակը, այլ այն աշխիւ ազգերէն է, որը կութաղներ կը կազնէն իւրեանց բարերարի անունը անմահացնելու, և արժանաւոր ներբողներով կը վատեն, կը բորբոքնեն իւրեանց որդւոց սիրտը և կը յորդորէն նոցա նմանելու։ Մէք Հայք աւելի պարտաւոր եմք պատուել մեր սոյն անմահ բարերարնելը, որք ոչ մի այն կործանմանէ մը ազատեցին Ազգը, այլ և հոգեւոր ու մտային մահուանէ եւս փրկեցին, ուատի Սահակայ եւ Մեռուլքայ, մեր այս գերագոյն Բարերարաց յիշատակը պէտք է անջնջ դրոշմէնք մեր սրախն խորերը յաւիտեան վառ պահելով նոցա սէրը, բանիւ և արդեամբ։

Ինչպիսի ընտակի պարգեւներ տուաւերինք Հայաստանի, որով այսօր իւր անփառունակ վիճակին մէջ անգամ փառաւոր է։ Աստուածային այս մեծ շնորհաց արդեամբ շատ անգամ կռլսաւեան վհէն ազատեցաւ Հայոց Ազգը։ Աստուածային սցո մեծ պարգեւներին անփառիրինելի է։ Օրհնեալ է Աստուած, որ կարող է ի՞քարանց յարուցանել որդիս Արահամու եւ պարգեւել մարդկան աշխարհաշէն բարձր հանճարներ, որու մորքէն կանցներ, որ այն պարթեւական մեղապարտ արմատէն պատուական բարունակ մի վերընծիւզելով պիտի բարձրացներ Աստուած, և նոր անուշակ և կինդանութիւն բու-

րոզ պազով կերակրէր եւ պարարէր ամբողջ ազգ մը, և նոյն փոքրիկ բարունակը աճեցնելով նովաւ կազմել արդիւնարեր արմատ մը, ուատի հետ զհեաւ նոր բարունակներ յառաջ բերելով նոցա կինդանացուցիչ պազով ազգի մը անունդ եւ կինդանութիւն մատակարարել։

Ահա այս պատուական բարունակներէն մին էր Սահակ պարթեւ որ իւր առաքելանման նախահօր շաւզաց հետեւելով թէ բանիւ և թէ գործով, ցցց տուաւ իւր հայրենասիրութիւնը, երբեմն ազգի օգտին համար զբրկուեցաւ, երբեմն իւր սուրբ և օրհնեալ գլուխը Պարսից անհաւատ և հըպարտ թագաւորաց առջեւ խոնարհեցուց, շատ անգամ իւր ազգի ազատութիւնը ստահուաննելու համար անհաւան նախարարաց պաղատանիքներ մատոց և մինչեւ նոցա մատնութեան զոհ եղաւ, բայց նա այս ամենուն դէմիւր անձի ուժուուժանութեան համար, ինչ կընէր, ինչ զէնք կը գործածէր նա, ոչ մի նիւթական զէնք չունէր, նորս զէնքն էր համբերութիւն մը, որց ոչ թագաւորը և ոչ նախարարը կարողացն զիմադրել, նորա վահանն էր անխանջ ջանք մը՝ որուն առջեւ թագաւորաց կամքը կընկճէր, և նորա զըրանն էր երկնային շնորհք մը՝ որ ապարան կը թողուր զթագաւորս եւ զավարհի իմաստուն։ Այն անզուգական ազգի նիւթագիրն այսպէս կը ներկայացնէ մեզ Խորենացին, « Մահկանացու ծնեալ անմահ զիւրն եթող իշխատակ ։ պատուեաց զպատկերն (զաստուածանմանութիւնն), պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանան, և այնքան կենցաղագալութեաց՝ իբր զի ոչ պակասութիւն իրիք մասն ի ծերութիւնէ եղանիզ և ոչ յախտից սուրնդանել։

Դորձնենք իսօքիքնիտ այն ըհարեւ-  
լոյն վրայ եւս, որ գործակից եղաւ որպ-  
րցն Սահակայ գործոց : Դարձնենք աչ-  
քերնիտ դէպ ՚ի բարձունու լերանց ջա-  
րոնց և Գովման, ահա անտի կ'ելո-  
նէ և կը բարձրանայ արեւն Հայաստա-  
նեայց Մաշտոցն Մեսորով օգնականն  
որբցն Սահակայ . Բնապէս արեգակն  
իւր կենդանացուցիչ զօրութէ տուն-  
կ'ըրը կառեցնէ, այսպէս և սա իւր հայ-  
րենախրութեան կրակովը կը վառէ և  
կը բորբոքէ իւր Հայոստպետի սիրաը և  
իւր գործակցութեամբ կը լլ. բականեղնէ-  
հայութիւնը : Սորա չքնաղ կենաց  
պատկերն եւս կը ներկայացնէ մեզ Խո-  
րենացին ասելով “ Գերազանցեալքան  
զամենայն, որը զայնու ժամանակու-  
առարինիք էին : Քանզի ամբարտաւա-  
նութիւն և մարդահաճութիւն ՚ի նո-  
րու վարս տեղի գտանել երբէք ոչ կա-  
րացին, այլ հեղ և լաւակամ և բարե-  
խորհուրդ գործ և երկնայնոցն զար-  
դարեալ սովորութեամբ զինքն բոլո-  
րց ցուցանէր : Վան զի գոյր տես-  
լեամբ հրեշտական մասք ծննդական,  
բանիւք պայծառ, գործովք ժութկալ,  
մարմնալ արտափայեալ, սարասիւք  
անձառ, խորհրդակցութեամբ մեծ,  
հաւատով տվիդ, յաւով համբերող,  
սիրով սննդեղաւոր, ուշառցանելով  
անձանձրայթ ։”

Անապէս Հայոստպետն Սահակ կը մի-  
անոյ Մեսորովայ հետ, և երկու ա-  
մոլք խորհրդով կը յղանեսն ազդի՛մի  
յառաջ սդիմութեան գլխաւոր տարրը  
և կը հրաւիրեն զլրօնաւորս և զաշ-  
խորհականս գալ միանալ իւրեանց  
հետ և խորհիլ ազդի փրկութեան վե-  
րայ . նոյնուգէս այսօր իժող միանան հայ-  
րապեաք վարդապետաց հետ, և հր-  
բառիրեն զայլս յորդոց իւրեանց ձե-  
սին տալ միմեանց և միաբան օգնել  
նոյն խորհրդոց արդիւնքը, այսինքն գր-

բականութին աւելի ծաղկեցնելու, յո-  
գուտ Հայութեան և ՚ի փառու Աստու-  
ծոյ : Նորա հայրենեաց օգափ համար  
ձգեցին իրենց բնակարաններն , ու-  
հանդիսար և հեռացան իւրեանց աղ-  
դականներէն , օտար երկիրներու մէջ  
թափառական կեանք անցուցին, եւ  
առանց բան մը շահելու դարձան ձեռն  
ունայն, այսօր և մեք ով եղբաբ, յիշե-  
լով մեր առարինի նախահարց անձնուի  
բութիւնը, սիրով համբերենք և լիուլի  
արդեամբ գառնալով ազգի որդւոց  
մէջ տարածենք, ծաւալեմք և բազմա-  
պատիկս արդիւնաւորեմք մեղ արտւած  
աւանդը :

Երանելին Մեսորով անտանե-  
լի տաժանմունքներէ վերջը մարդ-  
կային տկար կարողութենէ խոպառ  
կտրելով իւր յցար Աստուածային օ-  
ժանդակութեան կը դիմէ սրտեռ անդն  
բաղձանեօք, հաւատորով և յուսով . և  
Աստուած, որ կատարին է օրինաւոր  
խնդրուածաց, նորա գովելի փափա-  
քը կը լցուցանէ . մեք եւս շարունակ  
բոլորով սրաիւ դիմենք Աստուածային  
օժանդակութեան, որպէս զի արժա-  
նացնէ զմեզ ըստ ամենայնի կատարե-  
լուպէս ընդունելու մեր սրտին մէջ իւր  
տուած տւանդի հետ իւր սրբարար և  
բեղմնաւորիչ նորհքը :

Սուրբն Մեսորով աջակցութեամբ  
սրբոյն Սահակայ և հաւանութէ թա-  
գաւորին գլուխոցներ կ'բանայ և զանազան  
տեղերէն բազմնաթիւ մանկունք ժողվե-  
լով, կ'առսուցանէ նոցա տառուածա-  
ւուր հայկական տառերու գործու-  
ծութիւնը . թող սւրեմն այսօր և Հա-  
յոց վարդապետք Հայրապետաց՝ և Հ  
այրապետք մեծամեծաց յորդոր կար-  
դարով բազմացնեն Աղդային դպրոցնե-  
րըն, առաջնորդելով ուղիղ շաւղի մէջ :

Վերջ ամենայնի ահա սցագէս կը  
խօսին մեր ամենու հետ Ս . Ասհակ և

Մեսրովակ, թէ գուք կը մեր յաջորդը,  
դուք պիտի խնամէք ազգը և կրթի-  
նապատկելով ձեր ջանքը պիտի ուսու-  
ցանէք ազգի զաւակաց հետեւող լի-  
նիլիւրեանց նախահարց . և Աստուած  
պիտի վարձատրէ զձեզ, ինչպէս վար-  
ձատրեց զմեղ— :

Օ՞ն ուրեմն, այս աւուր սուրբ յի-  
շտակին հետ, հարք իմ և եղարք,  
միշենք մեր ազգի վիճակը մեր առ-  
նա ունեցած պարտքը, յիշենք զայն  
միշտ և այնպէս պատրաստուինք, այն  
պէս գործենք որ նորա ծանր ծանր  
վէրքելուն անմիջական դարմաններ, ըս-  
տի պեղանիներ հոգալու կարող լինիմք .  
Որպէս զի թէ մեր նախնի բարերարք  
և թէ արդի երախտաւորք և խնամա-  
կալք ուրախ լինին . այսպէս պէտք է  
յայտնել մեր երախտագիտութիւնը և  
ոչ լոկ խօսքով :

Ընդունեցէք և գուք Ս. Տէր, Հայ.  
ըրդ հասարակաց, ընդունեցէք Ձեր որ-  
դւոց խորին ընորհակալութիւնը, և ե-  
րախտագէտ զգացման հաւասարին, զոր  
ամեն առթիւ յայտնել խոստանալով  
Ձեր հայրական օրհնութիւնը կը խըն-  
դրեմք, որպէս զի Աստուծոյ ընորհաց  
ներքեւ զարդանայ այս մեր մստավե-  
րամ մանկանց խումբը, և մէք կազա-  
մէք զԱստուած, որ վարձատրէ Ձեր  
և մէտաբանական ու խոփս ջանքը և պը-  
սսիէ Ձեր բոլոր ազգուուտ և բարի  
իշմէրը .

Յոհաննէս Խաչոստուրեան Արքայինէքի  
Ս. Հայ. Ժառ. Վարժարանի.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՆԿԵԴԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ  
ԽԲԲԵՒ ՄԻԶՈՑ ՔԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՐՏԻ  
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Եւ այս առթիւ մեր կարծիքը Մասիսի և Փուշչի  
ներկայ խնդրոյն վայ .

Ի՞նչ գեղեցիկ բան է ձշմարտութիւ-  
նը՝ որ ամենուն բերանը կը ցնի, ամեն  
մարդ կը գովիզ զայն լեզուով, կը բարձ-  
րացնէ ու կը փառաւորէ բերնով, ա-  
մեն ոք կուզէ զինքն անոր հպատակ ե-  
րեւցնել. բայց և որչափ ատելի է ձրւ-  
մարտութիւնը որ մարդիկ չեն ուզէր  
տեսնել զայն, սարսափօք և զզուանօք  
խոյս կուտան անկէ : Ի՞նչ հակապատ-  
կեր է այս . ի՞նչ սէր ու ատելութիւն  
է ձշմարտութեան դէմ, զոր մարդիկ  
հանապազօք կ'զգան . ի՞նչո՞ւ բերնով  
սիրել կը ձեւացնեն և գործքով կ'ա-  
մեն . ի՞նչո՞ւ լեզուով գովիզել կախորժին,  
և գործքով շատ անգամ կը պարսաւեն .  
ի՞նչո՞ւ ի պատահել առթից յիշել կը  
փութան և մօտեցած ատենն խոյս տալ  
հեռանալ և անորմէն ծածկուիլ կ'ու-  
զեն . . . .

— Բ այց ի՞նչ է արդեօք ձշմարտու-  
թիւնը :

— ձշմարտութիւնն այն է՝ որ իրը,  
գործը, խօսքը, խորհուրդը և զգացու-  
մը իւր էութեամբն ու համայն որպափ-  
սութեամբը ի սպահանջել հարկին ՚ի  
յայտ գայ . այս հանգամանքներէն մին  
ուական եղած ատեն, ձշմարտնութիւ-  
նը՝ ձշմարտութիւն լինելէ կը գաղրի :  
ձշմարտութեան բնութիւնը զմարդ-  
կը թելադրէ՝ որ ինքնաբերաբար զայն  
սիրէ, մարդկային ախտերն ալ կը բըռ-  
նադատեն զմարդ ատել զայն և խու-  
սել անկէ, քանզի ձշմարտութիւնը լուս-  
է, իսկ ախտը և մօտութիւնք խաւարի  
գործեր են, զանոնք սիրողը հարկաւ  
լոյսը պիտի տուէ :

Նրկու հակառակորդ իրարու կը ներհակին և ընկեր ընկերին խօսքը կը ուտէ, կը հերքէ և շարունակ իրաւունք եւ ճշմարտութիւն կ'աղաղակէ . երկուքն ալ ճշմարտութեան յեցած, ճշմարտութեամբ զինուած և միմիայն ՚ի սէր ճշմարտութեան ՚ի հրապարակ ելած կը հռչակեն վիրենք . ասով կը վրկայեն որ ճշմարտութիւնը սիրելի է . սակայն յայտնի է որ ասոնցմէն մէկը սուտ է, հետեւաբար սոսկալի յանցաւոր . կամ ճիշտն ըսելու համար՝ ահեղոճագործ, ոչ միայն լնդ հանուր մարդկութեան առջեւ, զոր իւր չարեաց գործիք կ'ընէ . ոչ միայն սուտ խօսելուն համար՝ որ մարդու բնութենէն չէ, այլ նաև ճշմարտութիւնը նենդելով իւր ստութեան պատրուակ բռնելուն համար՝ ճշմարտութեան նշոյլ մարդկան աչքը զոյտել և անոր տակ զինքը ծածկած, մինչեւ իսկ համար մարդու բնութենէն չէ, այլ նաև ճշմարտութիւնը նենդելով իւր ստութեան պատրուակ բռնելուն համար՝ ճշմարտութեան նշոյլ մարդկան աչքը զոյտել և անոր տակ զինքը ծածկած, մինչեւ իսկ համար մարդու բնութենէն չէ, այն անիրաւութիւն է . ինչ որ անիրաւութիւն է, այն վնասակար է . ուրեմն ստախօսը՝ իւր պաշտօնին, վիճակին և դրիցը համեմատ վնասակար է շատ կամ սակաւ, անհատներու կամ բաղմութեան . իսկ վնասակարները կամ բարւոքել պէտք է և կամ իոնել, որպէս զի նոցա պատճառաւ այլք եւս շրվը նասուին եւս վնասակար շրդառնան . այսպէս ընելն արդարութիւն է . արդարութիւնը պարտք է . արդարութեան պորտուց գէմ մէղանչելք՝ սոսկալի բան է . . . .

Մէք ճշմարտակը երեւիլ ուզող ողբրմելի մարդիկս, աշխարհի մէջ կը մէղանչեմք, մեղաց հեշտութիւնը եւ

բաղրութիւնը լի ու լի կը վայելեմք, առանց խորհելու անկէ անհրաժեշտաբար հետեւելիք դառնութիւնը, ուստի արդարութեան հատուցումէն խոյս տալու համար մեր յանցանքը կամ կուրանամք, կամ կը թիւրեմք և կամ կը պատրուակեմք . բայց ասով ոչ թէ միայն չեմք արդարանար եւ ազամիր՝ արդարութեան հատուցումէն, այլնա և աւելի կը մեղանչեմք և արդարութեան գաւաղանը աւելի կը ծանրացնեմք մեր վերայ : Մէկ յանցանքը ծածկել ուզելով՝ բազմաթիւ յանցանաց մէջ կ'անկանիմք . եւ աւելի ամեթալին այն է որ պատրուակելու ատեն շարունակ մեր անկումը զգալով հանգերձ փոխանակ ետ դառնալու, ճշմարիար խոստովանելու և գոնէ քանի մի յանցանքէ ազատ մնալու, շարունակ խաբեւութեան մէջ կը յառաջանամք և յանցանք յանցանաց վերայ կը բարդեմք . և սակայն շարունակ ճշմարտութիւն, Արդարութիւն, իրաւանք ազալակել չեմք դադրիր . բայց այս կերպիւյաւիտեան արդարանալիք չ'ունիմք :

Ասանկ խաբեւայ յանցաւորք միշտ դադապարտեալ են Աստուծոյ առջեւ, Արդարութեան, ճշմարտութեան եւ նոյն իսկ իրենց խղճին առջեւ . բազմութեան մը եւ կամ գէթի իրենց դատախազնին առջեւ, նաեւ անաշառ պատմութեան ձեռքք ապագայ դարտւց առջեւ միշտ անարդ և նուխտեալ են, սյսպիսեաց յանցտնքը անեներելի է նոյն իսկ Աստուծոյ կողմեն . քանզի ճշմարտութեան գէմ է դործածնին . և Որդին Աստուծոյ վճռած է նոցա համար թէ՝ “Ոչ այս տեղ և ոչ հանդերձելցն մէջ քաւութիշտունին” :

Այս է ստախօսին դատակիւքը, քանզի նա ստանայլն է . նորու կը սրատկոնի և անոր հաւասարիմ ար-

բանեակն է : Անօրէնը զԱստուած ըլ ձանցնար և «նցին իսկ մեղքը անօրէնութիւնն է ո կ'ըսէ Առաքեալը : Անօրէնը՝ չարասիրտ կը լինի, նա՝ բարեցն հակառակ է և անհնագանդ օրինաց, ըմբոստ ընդդէմ արդարութեան, աներես և զրապարտող, ուստի և Աստուծոյ ու մարդկան թշնամի է, անօրէնութիւնը օրէնքով պատժելը իրաւոնք և արդարութիւնն է :

Որ և իցէ մեղք կամ յանցանք ուրիշ բանով ըլ քաւուիր, բայց եթէ անկեղծ և անպատճակ խոստովանութեամբ . այսպիսի խոստովանութիւնն մը յանցանքէն զջուելով զջալ և հրաժարիլ ուզելէ յառաջ կը գայ . ուստի և ներողութեան կ'արժանանայ կամ խրատով, կամ յանդիմանութեամբ, կամ յանցանքին համեմատ պատճով և կամ առանց այսպիսի հաւատցման անկեղծ խոստովանութիւնը հերիք սեպելով կը ներուի իրեն :

Առանց խաստովանութեան և դվյանն ներումն ընդունիը անհնարինն է ! այս է քրիստոնէական կը բօնի որոշումը և վճիռը . այս է է նաեւ Ճշմարիտ փիլիսոփայութեան հաւատրը . Արիստոտել անգամ կը խոստովանի որ՝ « Յանցանքը միմիայն խոստովանութեամբ կը քառուի ո : Խոստովանիլ չուզողը, յանցանքն ուրացողը և խսդէութեամբ արդարանալ ճշնողը, պարզապէս կը յայտնէ թէնիքն որոշած է շարունակ կամօք և գիտակցութեամբ յանցաւոր լինել . այնպիսին յամառեալ է, յամառեալը՝ ոչ գթութեան և ոչ ներողութեան արժանի է . քանզի չարեաց մէջ յամուող կամապատը երեսէ ինկած առելլ մի է Աստուծոյ և մարդկան . վասն զի հասարակաց իրաւանց կը հակառակի, վասն զի չարօրինակ կը դառնաց , վասն զի երիտասարդութեան բար-

քը եղծելով՝ անկեղծութենէ ՚ի իրարդակախութիւն կ'առաջնարդէ եւ ընկերութեան մէջն հաւատարմութիւնը վերցնելով, թշուառութիւնն տարածելու պատճառ կը լինի :

Գրագէաք առ հասարակի կրթութիւն կ'աղաղակին, ժողովրդեան կենաց վիճակի և բարուց վերայ կը գանգատին, պատգամներ կ'որոտան, վրձիռներ կ'արձակեն, օրէնքներ կուտան, ժողովուրդը կրթելու ձեռք կը զարնեն, և իրաւունք ունին . սակայն գրքաղաքար իրենք ևս բազմիցս այս պիսի յանցանաց մէջ կը գտնուին :

Այս գրագէաք, ուսեալք եւ իմբաղիք հրաժարակաւ յանցանքներ կը գործէն . մէկը շահասիրութեամբ բազմութիւն մը խարելով, անոնց քրտանց արդինքը կը շրթէ . միուսը կամապաշտութեամբ սուտը իրաւ, իրաւը սուտ կը հռչակէ և կը պնդէ . ուրիշ մը հակառակասէր ոգւտով խոսվութիւն մը կը սերմանէ եւ անհաճյ վիճաբանութիւններավ, օրեր, ամիսներ, և մինչեւ իսկ տարիներ, հասարակութեան միտքը կը զքազեցնէ և միրուը կ'արտականէ . (յայտնի է որ մեր այս ըսածներէն բացառութիւնն իրենց պարտքը, սպատիւը, և կրծումը ձանցող գրագէաք, ուսեալք և իրմբագիրը, որք գովեստից և շնորհակալեաց արժանի են) :

Հասարակութիւնը, բնշ կրթութիւն գաաստիրակութիւնի պիտի լնդունի երբիւը հրաժարակախցին դասախուները այս վիճակիս մէջն են, երբ զինքը կրթել գաստիրակել յանձն առնող անձնը և ու ուսուցիչները անձնական շահահամար հասարակաց իրաւունքը, ճրշմարտութիւնը և արդարութիւնը կը զոհին . երբ կամապաշտութեան հոմար նուիրական բաներն անդամ կը խեղաթիւրեն եւ ըստ հաճոյս կը ծամածուեն . երբ ուզած տանենին կտրող

կը լինին արդարութիւնը՝ կամ թեզուի ճարտարութեամբ և կամ այլ և այլ առարժան միջոցներով ուղած կողմերնին թիքել։ Այսպիսի գործողութիւնը կը մեխին մուաց առջեւ սա առածի իւ մասու թէ՝ “ՊՈՐՃՆ բանիք զուրկ են յառաքինութենէ”։ Եթէ այսէ կը սեմ հրապարակի լեզուն ու հօգին, ինչ կըսպասեմք ժողովրդէն, ինչու կը գանդատիմք նորա բարուց վերայ։

Ժողովուրդը զարմանալի կը բազով հակում մի ունի դէպ ՚ի իւր զարմանաց առարկայն, և ինչ որ տեսնէ իւր յառաջադէմ կարծած մասին վերայ, լաւ և օրինաւոր համարելով նը մանիլ կ'աշխատի։ Հազար անդամ վայ ուրեմն անոր՝ որ ժողովրդեան այս գովելի յասկութիւնը չարաշար կը գործածէ։ Ի՞նչ հարկ իսյ ժողովրդէն դանդասիլ, քանի որ նա տեսածն արդէն ուսած է։ Եթէ կրթութիւնն, դաստիարակութիւնն ապուալ կանչելավ ժողովուրդը խարել և քնացնել չե գոցանպատակն, թող ուրեմն իրենց քարոշած կրթութիւնն եւ գաստիարակութիւնն օրինակն անձամկը ցցց տան՝ որ զօրաւոր է քան զամն պատամ, վը ձիռ և օրէնք, այն ատեն ժողովուրդը նոքնայորդոր կը հետեւի անոնց, ինչ ուժու սրութէն նոցս վաստ օրինակն իրեւ լաւ կը հետեւի։ Բայց յառալի է արդարեւ որ ասոր հակառակ մէր գրագիտաց մէծ մասին վերայ բարցաւ կան ուղղութիւն չիկայ, խօսքի մը հեղեղ է կը թափի գլխէդ ՚ի վայր, կը վատացնէ զքեզ և կը յոգնեցնէ գլուխը, բայց առանց յագեցնելոց միաւը և կազդուրելոց սիրտդ, կը սահի, կը յնդի և կոչնչանց, վասն զի հոն մնադարար հիւթ չիկայ, բանին հետ դործնական ապացցու չի կայ, խօսքերու մէջ շքեզութիւնն, ճարտարութիւնն և հմտութիւնն հետ, բարցաւ

կան ուղղութեան կենդանի օրինակը չի կայ, այլ ընդ հակառակն օրինակները խօսքերու ներհակը կը ներկայացնեն։ այս եւս կը նշանակէ ստել խարել, և նենդեկէ որ է մեծ զեռն չարութիւն ընդդէմ ընկերականութեան։

Մեր այս ատածները ասպացուցանելու համար ժողովրդեան կեանքն արդէն աչքերնուս առջեւէ, երիաասուրդութեան եղջեւալ բարուց ցաւալի վիճակը յոյանի կ'երեւի եւ ատոնց պատճառ տուող դրաբարձ գրագէտներու բազմութիւն մը կարող եմք ներկայացնել, բայց փոշւոց տակ ծած կուած անցեալը չեմք ուզէր քրբրել, նարոգել և ումանց անձնասիրութեան դպչէլ, այլ միայն ներկայ ամենուն ծանօթ դէպէք մի, օրինակ մի յառաջ կը բերեմք, որ տակաւին ՚ի հրապարակի է։ Երկու գրագէտ կարծուածներ պիտի ներկայացնեմք, որոց անցեալ կեանքն ալ նմանօրինակ լինելով, կարող է իմաստասէր ընթերցարը ուղղութեամք հետեւցընթէ գորափակ գայթակղութիւն առթած են ամեն անոնց, որք իրենց հետ տեսնուելու, իրենց գրութիւնը կարդալու, կամ իրենց արաբքը լաւլու գմբաղդութիւնն ունեցած են, սոքան Թ, Պ, և Հ, Ա.

Ժամանակէ մը ՚ի վեր Մասիսի և Փառջի խմբագրաց մէջ պատուց խրնագիր մը ծագած լինելով, չե կարողացան դեռ իրաւախոհ լինել, և գործը հասաւ մինչեւ դատարան։ Ժամանակ մը եւս կայ, որ դատարանի մէջ երկու կողմէն վիճաբանելու կը զբաղին։ Երկու քրիատոննեաց աղդակից եղբարք, իրենց այսպիսի մէկ գործը մինչեւ դատարան հասցնելին, որչափ ամօթ և որչափ անվայել լինելը հասկացնելու համար խօսքս երկարցնել ըուզելով կը հարութրեմ զիրենք եղբարգական օրիով,

որ քիչ մը խոնարհին, Առաջին Կորըն թացւոց Զ. գլուխը քանի մը անգամ կարդան և իրենց քրիստոնէական ու եղբայրական պարտաւորութիւնը տվրին. մեք անցնիմք տեսնելու թէ ինչ է ասնոց խնդիրը և մինչեւ ուր հասաւ:

Մասիս օր մի իրեն եկած տեղեկութեան համեմատ յօդուած մը կը հրատարակէ, յետոյ անոր ներհակ եկած ուրիշ տեղեկութեան մը համեմատ ուրիշ յօդուած մի եւս կը հրատարակէ. ասիկայ բարեմոռութեամբ մեկնուելով կարող էր անկողմնասիրութիւն համարուիլ, բայց Փունչ այս ներհակ յօդուածի դէմ փոխանակ օրինաւոր փաստերով եւ ճշմարիտ ապացոյներով Մասիսի առած վերջին տեղեկութեան սխալ կամ սուտ լինելը հաստատելու, անարգանք թափեր է նորա գլխուն, և նորա արժանապատութիւնը վիրաւորեր է: Փունչ համար այս առաջին անգամը չէ. որ առանց համեստ ակնածութեան յականէ յանուանէ ասոր անոր պատուոյն կը դպչի և կ'անարդէ. բայց որովհետեւ այլք ներող և անցիշացոր գըտնուեցան, փոխանակ զգաստանալու և իւր ընթացքը փոխելու, շարունակեց և երթալով գահալիթեցաւ անխոնհ. մութեան վտանգաւոր անդունդին մէջ, որուն հետեւանքն է իւր այս օրուան վլիճակը: Քանզի այսօր դըտնուեցաւ մէկը՝ որ զգալով թէ Փունչ չի համար արժէք չըւնին, ոչ գումար ոչ արդահատանք և ոչ ներողութիւն, ուստի արդարութեան դիմած է:

Կարող էր Փունչ խոհեմութեամբ խնդրոյն սկիզբները զգուշանալ և գործը դատարան ը ձգել, պէտք էր ըստ արդարութեան ճանշալ պակեալին իրաւունքը եւ զայն տեղը դարձնել. Մինչդեռ մէկ կողմէն ինքն հեռաւոր

երկիրներու մէջ եղած զրկանաց և անիրաւութեան քողարկութուն դէմ կը բողոքէ և հասուցումն կը պահանջէ, միւս կողմէն ինքն իւր լիզուովը ձեռքովին ու գրչովը՝ ՚ի գործ դրած զրկանք մը՝ անիրաւութիւն մը ըլ տեսնելու կը զարնէ, ուրանալու կը ճգնի կամ առանց աղօրտած պատիւը տեղը բերելու, յանցանքը թեթեւցնելով օձիքը ձողոպիրել կ'աշխատի և յացանի է որ եթէ ազատի անգամ՝ անուղղակի կերպով տուժածը և կրած պատուհամը աւելի պիտի լինի, բան թէ խնդրոյն սկիզբէն արդարութեամբ եւ ճշմարտութեամբ վարուելով՝ հատուցանելիքը:

Յանցաւորին պարոքն է խոստովանիլ յանցանքը և չէ թէ ուրանալ. եթէ խոստովանելու կ'ամաչէ, առաւել եւս պէսք էր ամաչել յանցանք գործելու ատեն եւ չանկանիլ այն տեղուոր գտնուելին ամօթ կը համարի: Յանցաւորը մած սխալ կ'ընէ, երբ ՚ի սկըզբան իւր ըրածին յանցանք լինելը չուզեր ճանաչել, երբ խոստովանելովներումն խնդրելու արիութիւնը չունենար, որ քրիստոնէին և ճշմարիտ փիլսոփային գործն է: Անմտութիւնը ըրած կը լինի յանցաւոր մի, երբ անպատուութիւն և նուաստութիւն կը համարիսցնընթացքը որ վիճակը պատուց և բարձրութեան կ'առաջնորդէ. կը է այն ողորմելին որուն մտաց քրիստոնէութեան լուսաւոր շաւիլը խաւար կ'երեւի, բանզի կրիսք վարտիւած է. շարացար վտանգներու ենթակայ է նա որ հետեւիլ կուզէ՝ ոչ թէ ճշմարիտ փիլսոփայութեան, որ ճշմարտութեամբ և առաքինութեամբ կ'ենաց կ'առաջնորդէ, այլ սուտ անուն փիլսոփայութեան որ կիրքերը կը շոէ և վնասակար հաճցքները գրգռելով ՚ի կորուստ և յապահանութիւն կ'ա-

ուաջնորդէ : Նա ուզելով կարծեցեալ անպատռութենէ մի փախչել, պիտի զբկուի անկէ հետեւելիք փառքէն ու պարծանքէն և գմբաղդաբար հակառակ իւր նպատակին պէտք է անկանի խիստ մեծ անպատռութեանց և դա որն սնարդութեանց մէջ :

Փունֆիսանորդը (գուցէ մարդասի քական զգացմամբ) ուզեց ազատել ամ բաստանեալոր իւր անձարակ միմակէն . բայց փոխանակ ճշմարտուե հետեւելով ուղղը ընթանալու, խոտորնակ շաւզով ձախաղ փաստաբանութեան ձեռք կը զարնէ եւ ստելով ու խարդախսելով կ'աշխատի պաշտպանել զամբաստանեալը : Մեծ . Թ . Պէկեան էֆէնտի իւր բոլոր իրաւաբանական և օրէնսդի տական հանձարովը և հմտութեամբը չէ կարողացեր սովորիլ տակաւին թէ ասենաբանին և փաստաբանին գլխաւոր յատկութիւններէն և գովելի հանդամանքներէն մին է անկեղծութիւնն ու ճշմարտութիւնը . որով միայն կարող է մարդ յաջողիլ, յաղթանակել եւ ճշմարիտ փառք ստանալ . առանց այս հանդամանաց եղող փաստաբան մի յացանի է թէ ինչ անուն ունի :

Գործ մի ճշմարտութիւն լինելու համար պէտք է իրօք և ըստ ամենայնի ճշմարիտ լինել . միայն՝ (ես նշմարիտ կը խօսիմ, նշմարտութեան համար իրաւաբարակ եղած եմ) ըսելը և միայն խօսքով իւր անձին վկայելը հաւասացը նելու . համար բաւական չէ, ամենէն հաւասարիմ վկայն մէջ տեղ գտնը ևած գործն է :

Ազգայինք տակաւին չեն մոռացած Մեծ . Մամանանի խնդիրը . յորում Թ . Պէկեան էֆէնտի իւր իրաւաբանական և հաշուագիտական տաղանդին առաջնին փորձն փորձեց և աշխարհի առաջնիւ . հանդիսանալու . համար մեծ չիգ թափեց . Ազգային ժողովները,

լրագիրները և գրեթէ ազգին մէկ մասը երկար ժամանակ յուզման և տատամասութեան մէջ տարուբերելով վերջը ուժն հատաւ . հնարքներն ու ճարտարաբութիւնները սպառեցան եւ ինքը շրթնւնքը կափկափելով և խօսքերը կակաղելով բեմէն վար թաւայցաւ . Եղն միջոցին իւր այս անխոնէմ համարձակութեան հատուցումն ըլլինելն և թերեւս շղզորիթ բարեկամներու սոււտ ու սնոտի գովելստներէն խրախուսուած ու զօրացած՝ վերըստին սկսաւ զանազան խնդիրներու մէջ մտնել, երբեմն յաջողիլ կարծեց և երբեմն ըլ կրնալով ծածկուիլ մերկ մնաց . . . նշնապիսի խնդրոց կարգէն է նաեւ այս վերջին խնդիրն ալ . յորում Փաստաբան Լ. Փէնտիին հնարագիտութիւններն հատած լինելով իւր համարձակութիւնը այն աստիճանի կը հասցնէ . որ օսարի առջեւ հայերէն բառերու հարտզատ նշանակութիւնը կը փոխէ և այսպիսի ձախող փաստաբանական ճարտարաբութեամբ ամբաստանեալին պատիժը թեթեւցնել կուզէ : Գովելի ջանք . սակայն ինչպէս արդէն ըսինք այդ ջանից մէջ յաջողելու մէկ հաստիկ միջոցն էր ճշմարտութիւնը . մինչդեռ հիմաս ստելով գուցէ խապառ կորսնցուց իւր տածած յոյաը . քանզի ստախուսութիւնն ու խարդախութիւնը քնաւ բարի հետեւութիւն չէ կարող ունենալ :

Տաճկական առածը կրսէ թէ գեղարդը քուրձի մէջ չի պարփակուիր, Փունֆի գրած բառերն ոլ այն չափ պարզ են և գործածուած տեղերըն այնչափ յայտնի, որ ոչ երկդիմութիւն կը վերցնեն և ոչ կրնան պատրուակիլ . ճարտար հմուտ և լ. լ. զուագէտ փաստափան մի այդ բառերը նոյն գործածուած տեղը նշանակած իմաստէն դուրս ինչ կերպով ալ մեկնէ միշտ

Խարէւութիւնը յայտնի պիտի լինի :

Իսռ մի, թէ և լու նշանակութիւն ունենայ, զայն գործածողը կարող է ասացուածքի և արտասանութեան ձեւով վաս նշանակութիւն տալ այնմէ : Վրտուած բառէն աւելի բարձր, ուրբ և վօեմ բնչ բառ կայ, և ահա կը տեսնեմք որ Վատով : « Առ տուածորդիդ Պարախց ըսելով զՇ ապուհ կանարգէ : Վրդ խնդ' ըս այս կետին վերայ է, թէ Փանջի մէջ դործածուած վաս, եֆ, կենդանի և այլն բառերը բնչ նշանակութեամբ դործածուած են, Վեց կը տեսնեմք որ այն բառերը թէ ինքնին և թէ իրենց գործածութեան տեղն ու սպարագոյն կը յայտնին որ երբէք լաւ նշանակութեամբ չեն գործածուած փունջի մէջ :

Պարապտեզը խնդիրը թիւրելով մինչեւ հոն հասուցած են որ ժամանակ որսալու համար բառերուն նշանակութիւն մուրան . թերեւս կարծեն սմանիք թէ կարմէր որ դոցա նշանակութեն նկատմամբ մենք ես բառաղըն նական գիտողութիւններ ընէինք, իրաւ է, մանաւանդ հարկ պիտի համարեինք մեզ, բայց մեք նկատեցինք որ նախ խնդիրը բառազնութեան վերայ չէ և բնաւ երբէք հարկ չի կար այդպիսի բառերու նշանակութիւններն փոփոխելու և նորէն նշանակութիւն մուրալու, և երկրարդ կը տեսնուի որ անդր քան զկարեւորն իսկ խօսուած է, յօրս մասնաւորապէս գովութեան արժանի է Վեծ, Տ, Վանավեան որ արժանաւոր բացաւարութիւն և պատասխան տալէ զատ՝ բռն խնդրոյն վերայ կը յածի և մոքերը միշտ գէպ ՚ի նոյն կը գարձնէ, ուստի մէք հարկ չեմք համարիք նորէն լեզուաբանական ու բառապեմական բացաւարութիւններ տալ այլ միայն կարճ խօսքով կաւումք որ կառ բառը (Յ. Վ. կեանէ թէնարիք)

մեկնած յուղապէ բուռի նշանակութիւնը չունի, և ոչ ուրեմ երբէք հայերէն գրոց մէջ գործածուած կը տեսնուի ինձ բառը ինչպէս ալ մեկնուի, նշանակութիւնը միշտ անարդէ . իսկ կենդանի բառը իւր բոլոր աջնուական նշանակութեամբն հանդերձ եթէ են թմակայն մասնաւորոց յարակից բառեր չունենայ, կարող է անսրգական իմաստ տալ . կամ թէ կենդանի բառնին ունենաւ իւր իւր իմաստն ամբողջացնող յարակից բառերէն կը որոշուի՝ անհանոյ կամ բանականի համար բառւած լինելը : Ես յապատճառութառ մը այս ինչ տեղ լաւ նշանակութիւն ունենալը ապացոյց չէ ուրիշ աեղ մի ալ նոյնպէս լաւ լինելուն . ուստի կենդանեաց և մեռնց . կենդանի եմ ես, և այլ բիւրուաօր տեղեր յայտնի են թէ ինչի համար բառւած են, ըրոց չի նսանիր փունջի մէջ բառւածը, ուրեմն թ. Պ. է գիւնահի իւր բերած օրինակներովը խարէւութիւն կընէ : « Կարձեալ ինչպէս վերն ըսինք Վատուած բառին համար, նոյնպէս կենդանի բառին համար ալ կ'ասեմք թէ ասցու անձի ձեւով անարդ նշանակութեամբ կընայ գործածուիլ . մանաւանդ մեր արդի լեզուին մէջ, ինչ պէս գործածուած է Փանջի Ժ. ջ.

Վեց սիրտը կարեվէր կը խոցուի այսպիսի դէպէրէն, որս ստութիւն յամառութիւնու կամապաշտութիւն ձեռք ձեռքի տուած կարծես դաշնակցուն բարյամականութիւնը տապաշէլ և զմարդ վայրէնութեան հայցնել :

Վհա բացարձակ կը տեսնես աղնիւ ընթերցող թէ կամապաշտութիւնն ու խարէւութիւնը մարդու մինչեւ ուր կ'առաջնորդեն : Վզգասիրութեամբ և հայրենասիրութեամբ պանծացաղ և նշանաւոր անձէ մը ազգուցին ընդ հանութը ժողովոյ մէջ ներ-

բողեան ընդունող մէկը այսօր անհաշ-  
ատարմութեամբ կաղջատէ և կա-  
ղավազէ իւր ազգին և հայրենեացնը  
ւիրական մէկ աւանդը՝ սյն ալատուա.  
կան ընզուն՝ որով ինքն այսօր գարա-  
ռոր ազգ կր ճանցուի . իրաւամբ ը-  
սած է ուրեմն իմաստունին մէկը թէ .  
“ Աստուածապաշտութիւնը ամուսնա-  
կան սրբութիւնը եւ արդարութիւնը  
սուբի տակ առնող՝ և Հարենիք, Հայ-  
րենիք աղաղակողը առւտ է, մի հա-  
ւատար անոր, այնպիսին կեղծաւոր  
հայրենասէր և ամենավասակար քա-  
ղաքացի է ” :

Ո՞ր զարմանաց եւ ցաւոց հետ  
խիստ գմուար կը լինի մեզ զսպել մեր  
արդար ցասումը այնպիսի բռնօբաւ-  
րութեան մը գէմ որ նախնեաց իրա-  
ւունքը կը զսէ և լեզուին սեպհակա-  
նութիւնը կը կողոպտէ տեղը սարդի  
սատայն դնելով, սակայն ինչ կարող  
եմք առնել այնպիսեաց որքոչ խօսք կը  
հասկանան, ոչ խրատի ու քարեկա-  
մական յանդիմանութեան միտ կը դը-  
նեն ոչ փորձով կը խրատուին և ոչ խիկ  
պատիկառնք ունին : Արդարեւ այն  
որ կը ստէ, այն որ հրապարակաւ ա-  
հագին քազմութիւն մի խարելու կը  
ճնի, այն որ յայտնի Տշմարտու-  
թիւն մի ուրանարու չափ կը պի-  
ջանի, այնպիս մարդավայշել զգա-  
ցումներէ և ազնուական կիրքերէ  
զուրի կը լինի, և այնպիսեաց համար  
մէք Աստուծոյ շնորհքը մաղթելէ և  
նոցա դարձի և ուղղութեան համար  
ազօմելէ զատ ուրիշ ըսելիք և ընելիք  
չունիմք :

Ահա այս ամենասպարզ և ամենուն  
յայտնի օրինակէն պայծառ կերպով  
կերեւի յանցանքն ուրանարուն կամ  
Տշմարիտը չը խստավանելուն ամենա-  
գառն հետեւանքը, մինչդեռ եթէ  
չը պատրուակաւէր, շուտով կարելի

էր զերծանել և թերեւս բարժապէս  
ուղղութեան համար ալ օգտակար լի-  
նէր, բայց այժմ խաբէութիւն ընե-  
լով աւելի մեծամեծ յանցանաց մէջ  
գլորեցաւ, օգուտ մի շունեցաւ եւ  
գուցէ աղատելու համար աւելի մեծ  
փրկանաց պիտի կարօտի :

Ուրեմն Տշմարիա խստովանու-  
թիւնն է միջոց քաւութեան և Տշմար-  
տութիւնն է միմիայն անխօտուր առաջ-  
նորդ գէտ ՚ի իրական փառս և ՚ի պա-  
տիւ : Շշմարտութեան ճանբուն վե-  
րայ թէպէտ և մեր կիրքերն ու ցան-  
կութիւնները նուաստութիւն և ա-  
նարգութիւն ցոյց տան, սակայն Ճըւ-  
մարտութեան համար նոյն անարգու-  
թիւններն արիաբար և յօժարակամ  
յանձն առնուլն ալ փառք ու պա-  
տիւ, քարձութիւն և պարծանք է .  
սակայն աշխարհի որդիք հակասու-  
թիւն կ'ասեն սմա և կը ծաղբեն, քան-  
զի չեն հասկանար, և ինչ որ չեն գէ-  
տէր, զայն կը հայհցեն . (Յուդայի  
կաթ . Ա . 8 .) : Ի՞սպ Տշմարիտ քրիս-  
տոննեայն խիստ պարզ կը հասկանայ  
և ամենօրեայ տեսած փորձերէն ալ  
խմատասիրելով կուսանի որ բնութե-  
մէջ անցեղլի օրէնք մի է այս աստուա-  
ծային Խմատատութենէն սահմանուած ,  
զոր յայտնած պարզած և իւր կեան-  
քովն ու խօսքով քարողած է մեզ Աս-  
տուածորդին Յիսուս Քրիստոս , եւ  
իւր հեաեւողաց այնպէս գնալ պա-  
տուիրած է . “ Իուք Տշմարտութիւ-  
նը ճանցիք, կ'ասէ, եւ Տշմարտու-  
թիւնը զՇեղ ազատ պիտի ընէ : (Յուկ.  
Է . 33) : Եւ թէ , “ Անձը քարձրա-  
ցընողը պիտի խանարհի և խոնարհե-  
ցընողը պիտի քարձրանայ : ”

Յանցանքը՝ ամաչելով հանդերձ  
անկեղծութեամք և Տշմարիտ խստո-  
վանութեամք պատմողը ուղղուելու  
միտում, յարմարութիւն . և կատարե-

լագործուելու փափառ կ'ունենայ ,  
(խօսքերնիս իրենց յանցանաց վերայ  
պարծեցող և լրբութեամբ պատմող  
ներուն համար չէ , այնպիսեաց ուշը<sup>դ</sup>  
զութիւնը յուսահատական է .) եւ  
այն ատեն ճշմարիտ մարդկութեան  
սահմանին մէջ մտնելով փառք , պա-  
տիւ , պարծանք և մեծութիւն առանց  
իրեն հետամոռութեան վիճքը կը գըտ-  
նեն ու կը փառաւորեն : Իսկ իւր յան-  
ցանքը բուն որպիսութեամբը ը յայտ-  
նող , ուրացող և պատրուակող յան-  
ցաւորը ճշմարիտ վեհանձնութիւն  
չունի , նա ամբարտաւանութեան ո-  
գի կը կրէ , յանցանքն անկեղծօրէն  
յառաջ բերելը յիմարաբար ցածու-  
թիւն կը համարի . եղածին վերայ ցա-  
ւիլ ամաչելն ու զղալը տկարութիւն  
կը համարի , սխալած ճանապարհէն  
ետ դառնալը նուաստութեան կը հա-  
մարի : Ի այց նա յայնժամ կը ցածնայ  
կր տկարանայ և յետին ծայր անարդու-  
թեն կը համանի , երբ յանցանքն ուրանա-  
լու . կամ պատրուակիւլու խորհուրդը  
կը յշանայ և մտացը մէջ փաստեր ու  
պատճառներ կ'դասաւորէնայանժամ  
կը վատթարանայ երբ յանցանքէ ՚ի  
յանցանս կը գլորի և մէկէն աղատելու  
համար աւելի չարագոյնին մէջ կ'ուհիր

Վ. յա փորձանոց գիմադրելու մի-  
ջաց և միմիայն կարող օրէնսդիր քրիս-  
տոններութիւնն է , որով կարաղ կը լի-  
նի մարդ բուն մարդկութեան պայ-  
մանն ստունալ եւ այն տեղ հասաա-  
տուն մնալ . սակայն միայն բերնով ըն-  
դունալներուն համար . քրիստոններու-  
թիւնն ալ սոյն արդիւնքը չարտագրէր .  
այլ նորս սահմանած կենսաւէտ օ-  
րէնքներուն երկիւղած ու խոնարհա-  
միու հնազանդութիւնն կը պահանջէ :  
Ով քրիստոններութենէ դաւրս կ'որո-  
նէ ուղիղ և պատուուոր կենաց ճա-  
նապարհը , բարի մարդկութիւնը եւ

ընակր բաղաբացիութիւնը , իսկատ կը  
սխալի :

Կուզեն երջանիկ ու փառաւոր  
կեանք , իսաղաղ սիրտ ու հանգարտ  
միտք ունենալ , մի մեղանչէր , կըսէ  
քրիստոնէութիւնը : Փոխանակ մե-  
ղանչէր վերջը խաղաղութիւն , ա-  
ռողջութիւն և նոյն խսկ կեանք գըտ-  
նելու համար չարաչար տանջուելուդ  
և աղատուելու համար նորանոր ըդդ-  
թաներով կաջկանդուելուդ , պէտք է  
որ նախապէս պատերազմիս կրից յա-  
խուռն շարժութեանց դէմ և անկէ  
վայելել կարծած վայրկենական հեշ-  
տութիւններդ արհամարհես , որպէս  
զի մշտնջենաւոր բաղադր բերկրութիւ-  
նը վայելես , զոր ոչ ոք և ոչ ինչ կա-  
րող չէ բառնալքեզմէ , բաց ՚ի յան-  
ցանքէն կամ մոլութենէն :

Վայնիւ ընթերցող մէջ բերած օրի-  
նակս նորէն լիշէ , որպէս զի ըսածնե-  
րըս ու ըսելիքներս լաւ հասկանաս :

Խնչպէս իրենց կիրքերն ՚ի շարժե-  
լըն առ ժամանակատարողք վայրկենա-  
կան բերկրութիւն մի կ'ունենան ,  
նոյնպէս յայտնի է , որ Փունջի Ուծ .  
խմբագիրն ալ նոյն բառերն ու մոկ-  
գիրները առղելու վայրկենին աննկա-  
րագրելի հեշտութիւն մի զդացած  
է . առանց մտածելու այժմեան դառ-  
նութիւնը , եւ յաղթանակել երե-  
ւակայելով , ինքզինքը փառաց բարձ-  
րագոյն ծայրը գտած էր , առանց  
գէմ ընդ աղօմ նշմարելու այն ստո-  
րին վիճակը յոդում կը գտնուի այսօր :  
Ի այց եթէ այն ատեն իւր կրից բըռ-  
նութիւնը զապէր և բանին հապատա-  
կեցնելու համար քիչ մը արիստրան ճիգ-  
թափէր , անշուշտայժմ հանգիստ պիտի  
լինէր : Վ. յապէս իմացիր ամեն աեսակ  
կիրքերու համար ալ , որոց վայրկենա-  
կան թափիր սանձելու փոյթ ընելով  
կանկանիմք ահաւոր վատանգներու մէջ

Քրոյ չեմք կարող դիւրութեամբ ա-  
ղատիկ:

Այս է ճշմարիտ միջնորդացու-  
թեան վարդապետութիւնը և բարոյ-  
ականութեան հիմնը. զոր նուի  
ըագործեց քրիստոնէութիւնը, սահ-  
մանեց և ուսոյց, որ և բնութեան օ-  
րինաց նման առանց վնասու չէ կարե-  
մի յեղոջքիլ կամ զանց առնուիլ:

Քրիստոնէութիւնը իւր ժառան-  
դորդաց ժամանակաւոր և մշտնչենա-  
կան կենաց բարութեան համար սահ-  
մանած է այս օրէնքները. բայց մարդ-  
կային տկարութեան վայրիկ մի զիջո-  
նելով գութ, կորեցութիւն և շք-  
նորհք բրած է սահմանելով խոստո-  
վանութիւնն ու ներելու պարտաւո-  
րութիւնը, և այս այնչափ հարկաւոր  
դատած է որ մեր հանապազօրեայ ա-  
զօթից մէջ ող յիշած է, որպէս զի  
միշտ ուսանիմք և միշտ գործադրեմք:  
Յօցութեան համար խոստովանիլ ան-  
հրաժեշտ է. խոստավանել յանցանքն  
ըստ ամենայն պարագայից առանց  
պատրուակելու, թողութիւն ընդու-  
նելու համար խոստովանիլ՝ վիշտ եւ  
ամօթ զգալով, զղողով, ուրիշ  
անգամ լինել առաջադրելով եւ  
խոստան վնարոյ հաստատ մնալով, որ-  
պէս զի ներումն ընդունել կարելի լի-  
նի. ասոր համար յատուկ պատուէր  
ունիմք թէ, այսթէ քու եղալրդ քե-  
զի գէմ մեղանչէ և գայ ապաշարու-  
թիւն խոստանալով թողութիւն ու-  
ղէ, ներէ իրեն. ըսել է որ առանց  
ապաշարելու և ներումն խնդրելու  
համար յանցանքն յիշելու թողութիւն  
ըս կայ. խնդրելն եւս՝ ուրիշ անգամ  
ընելու խոստամիք եւ եղածին հա-  
տուցումն ընելու յօժարութեամբ կը  
լինի. և ահա այս է ապաշարութիւն  
ըստածք:

Ո՞ւր անձնասիրութիւնն ու ամ-

բարաւանութիւնը ինչ հրապու-  
րանկներով և ինչ բանաւոր կարծուած  
պատճառներով զմեզ այս շաւդէն խո-  
տորեցնէ, դէպ ՚ի մոլորութիւն և ՚ի  
վտանգ առաջնորդած կը լինի. վասն  
զի այս ճանապարհէն զատ ուղղու-  
թեան և կատարելագործութեան ու-  
րիշ ելք չկ կայ:

Ո՞ւր բաճներէն կարծեմ ըստ բա-  
ւականին կը հասկացուի թէ ինչ է  
մարդու մը պարագը երբ գմբազդա-  
բար փորձութեան առջեւ արիու-  
թիւնը կորուսանելով կընկճի. Անկա-  
նիլը տկարութիւն է, բայց առանց  
կանգնելու փոյթ ունենալու՝ անկեալ  
տեղը փաշոցն մէջ թաւալելը բացի  
տկարութենէն վաստոթիւն և ամօթ  
ալ է. կանգնելու համար հակառա-  
կորդին օգնութեան ձեռքն ոչ թէ մի-  
այն մերժելու չէ, այլ և խնդրելու ալ-  
է, որ այնպիսի պարագայի մը մէջ ոչ  
նուաստութիւն և ոչ ամօթ պէտք է  
սեպէլ, այսպէս ընել կը պարտին ա-  
մեն յանցաւորք. պէտք է նոյն միջո-  
ցին զգան եւ քանի որ ճանապարհը  
մօտ է, ետ դառնալու հնարքը խորհին  
և շուտով դառնան. Փունջի Ո՞ւթ.  
խմբագիրն ալ պէտք էր այսպէս ընել,  
և եթէ խնդրոյն նիւթ եղող Ո՞ափիսի  
հրատարակած տեղեկութեան սուտ  
կամ սխալ լինելուն վրայ վստահ էր.  
լըջմտութեամբ իւր դիտողութիւն-  
ներն ընելով թող Ճշմարիտն հրատա-  
րակէր, այն տանը գովեմի կը լինէր իւր  
խոհեմութիւնն ու արիութիւնը, և  
այս ամեն ազմուկ ու շփոթութիւն  
աելիք չէին ունենար. Այժմ ինչ ե-  
զու իւր շահը, ահաւասիկ ամեն  
մարդ կը տեսնէ: Կա ասածը չէր կա-  
րող ուրանալ, քանզի խօսքելը մէջ  
աել կը կենացին. ուրեմն ինչ ընել  
պէտք էր. — Իմաստները վախել եւ  
ըուն խմացուածէն տարբեր մեկնու-

թիւն տալ. — բայց ասի ոչ արիութիւն  
է և ոչ ճարտարութիւն:

Ո՞ք պարտիմբ մտածել որ երբ  
այլոց վատ կասեմբ մեք արի և բարի  
պէտք է մինիմբ. այլոց եթէ իծ կամ  
ոչ կասենք մեք պէտք չէ ստու-  
թեան և խարէութեան մացառներու  
տակ սողմնքը զայլս անամացնելու ա-  
տեն՝ մեք մեր մարդկութեան սրայ-  
մաններն ըստ ամենայնի պահելու եմք,  
տպա թէ ոչ այսպէս ողբրմելի է ամեն  
այն թշուառ յանցաւորներու վիճա-  
կը, որբ իրենց յանցանքը փոխանակ  
փիլսոփայսաբար խոստովանելու իրենց  
թերութիւնքն ու զգելու և վնասուն  
դարման որոնելու, կուրանան զայն և  
խաբէութեամբ արդարանալ կը ճըգ-  
նին և մատուցուած բոլոր օգնութիւն-  
ները կարհամարհնեն:

Ո՞ք կը ցաւիմբ այնպիսեաց վե-  
րայ, ինչպէս ցաւիլ պէտք է վոտան-  
դաւոր հիւանդի մի վերայ որ ցաւ  
չունիմ ըսելով ամեն դեղ ու դարման  
կը մերմէ. կը ցաւիմբ մանաւանդ ա-  
նոր համար, որ այնպիսեաց ախտը  
փոխադրական լինելով շտաներու բա-  
րոյական մահուան սպատճառ կը դառ-  
նան, բայց խոհեմը տեսնելով նոցա  
կեանքն ու վախճանը կը խրատուի և  
կզգուշանայ:

Վահոմանը ըսի. բայց հարկ է յի-  
շելթէ յանցաւոր մի առանց ձշմար.  
տութեան և արդարութեան որ և ի-  
ցէ Ճնասպարհով կամ հնարքով մին-  
չեւ խոկ դատող ատեանի առջեւ ան-  
գամ արդարանոյլով ազատի, այդ ար-  
դարութիւնը խարէութեամբ լինե-  
լուն համար անարդութիւն է, և այդ  
աղատութիւնը իւր կիրքը պաշտե-  
լով լինելուն համար ամենավատ գե-  
րութիւն է. նա չէ կարող արդարա-  
նու ոչ իւր խղճի և ոչ հստարակաց  
ատենի առջեւ:

Ո՞ք քաջայոյս եմք որ մինչ ցարդ  
ինդիրը որոշուած և դատը վճռուած  
է, սւստի մեր այս խօսքերը ուրիշ  
բանի չեն ծառայեր բայց եթէ ՚ի խը-  
րաս և ՚ի զդուշութիւն ամեն անոնց  
որք խրատ ու յանդիմանութիւն լսե-  
լու կը յօժարին:

Ո՞ւ աբրէ Ա. Արդուեան:

### ԴԱՍԻ Ա. Բ. ԿՈՒԹԻՒՆ

#### ԿԱՆԱՑ

(Հարունակութիւն, տես թիւ 8:)

Կը կարդամբ Մովսիսի գրոց մէջ,  
այն որ Աստուածային տառ կ'ըսուի,  
Աստուածաշունչ գիրք, թէ երբ իւ-  
րայէլ Աքրահամու որդիի Եթիպտոսէն  
հրաշլուք ելան, անոնց ահը բոլոր շրջա-  
կոյ երկիրները տարածեցաւ. ուստի  
Ամաղէկ զբաղամ կանչեց, որ անիծէ  
զիսրայէլ, այն ժողովուրդ որ արդէն  
իրեն նախահաւը իւր հարբ օրհներէն-  
ին, ու Աստուածը իւր հովանի բազուկ  
անոնց վրայ տարածեր եր և կը խնա-  
մէր, երբ այն մարդարէի շրթունք ախ-  
ղեցաւ օրհնեալն անիծելու, իսկոյն  
մարդահաճութեան ոգեւով հնաւը գլւ-  
տաւ իրատ տուաւ Ամաղէկայ թէ,  
եթէ կ'ուզես օրհնեալ խրայէլ տկա-  
րանայ այսպէս արա, ինչպէս որ կը կար-  
ծեմ պիտի առաջ երթայ, այն է ձեր  
կանայք ու աղջկունք թող տուէք որ  
երթան այն ժողովուրդ խարեն անոնց  
հետ չարիք գործեն, խրայէլի Աստ-  
ուած սրբութիւն կը սիրէ, երբ այն-  
պէս տեսնէ զանոնք երեսէ կը ձգէ ու  
կ'երթաք զանոնք կը կոտորէք. այս,  
այս երեսպաշտ չարախրատ Բաղամի  
ըսածը ըրին և շատ ձիշտ եր որ Առ-  
տուած պղծութենէ կը զգուէք, բայց  
գուշակին ըսածին պէս չեղաւ, Աստ-  
ուած իւր բարկութեան վրիմով պատ-  
մեց կնամոլ հրէայք, դիտապատ  
երկիր փուեց քասն չըր հաղար մարդ,

մինչեւ Փենեհէս Աստուծոյ արդար  
ցասումը իւր տէգավ վերջացոց, ար-  
դեօք մեր մարդ եւ մեր քերց արդի  
ընթացքը Ամաղէկացւոց ըրածէն տաս  
աստիճան վեր չէ, զի երբ կիսամերկ,  
շարած եւ որքան որ ճաշակ ունին  
շարդարուած, երբ հրապարակ կ'ել-  
նեն, այն եւս ոչ ինչ պատճառ մը ա-  
ռաջ բերելով Ամաղէկացւոց կանաց  
ըրած չեն գերազանցեր, ով կ'ըսէ ցո-  
րեկուան շուկաներու մէջ, երեկոյին ըզ-  
բօսավշրմերը, գիշեր պայօները ու  
ժխոր ժողովակներու մէջ եղածներ  
պակաս հրաբուրիչ են Ամաղէկացւոց  
կիմիներէն։ Արդեօք մենք ալ կը պատ-  
ժուիք թէ ոչ, ով որ զգալ կուզէ կը  
տեսնէ, ով որ անբան է արդէն ուտել  
ու բնութեան միշտմը մինակ գիտէ  
խօսքս անոր չէ, մի թէ կօռելան քիչ  
մարդ զոհեց, կրակներ քիչ պատիժ են։  
Հայեր և Հայ տիկնայք աղէկ աշքեր-  
նիդ բացէք, այս քան կորուասներուն  
մէջ միշտ մէծ բամին մերն է, իորաւ  
յելէն արբութիւն առաքինութիւն կը  
պահանջի, զի իսրայէլ Աստուած սուրբ  
և նախանձու է։ Թող մեր պատուա-  
կան կանայք մոլին, Աստուծոյ դէմ  
զինին իւր սլաքներ պատրաստեն միշտ  
տեղալու, թող մոլին կ'ըսեմ եկեղեց-  
ւոց սկզբանց դէմ, որ պարկեցուութիւն  
կը քարտզէ, թող մոլին իրենց նուիրա-  
կան սեռի դէմ, որ ամօմիսած եւ  
պատկ սուստ լինել կ'ուսուցանէ։ Թող  
մոլին այն բարի արարքի կամաց դէմ,  
զի նա կին էրիկ մարդուն սգնական տը-  
ւաւ, և ոչ թէ սատան, այսօր մեր կա-  
նայք պարզապէս մեր սատան են և մեր  
բարոյականին թշնամի։ Ընկերական  
դաստիարակութիւն վաղ ուրեմն ինքը  
զինք ժողված փախած է, ուրեմն անոր  
վրայ խօսելը աւելորդ է, և այն քան  
աւելորդ, ինչքան որ գայլու գլխին ա-  
ւետարան կարդալ։ Թէ որ տիկնայք

կուզեն իրենց այս վաս բնաւ որութիւն  
ձգեն, պէտք է գարձեալ ընկերու-  
թիւններ կազմեն, պարկեշտ և Հայուն  
վայելու ձեւով հագնին, պատկառա-  
նք շրջն, տան մէջ փաղացի մէջ։ Զբօ-  
սավարտելով իրենց չէ աղատ աղբին և  
աղատ ժողովութեան է, թող անոնք  
վայելեն, մէք մեր տնասկան երջանկու-  
թեան մէջ ասպրիմք, որուն մէջ սրբու-  
թիւն կայ, սէր կոյ, և Աստուած կոյ,  
ինչ պէտք է երթալ այն տեղ՝ ուր ոչ  
երջանկութիւն կայ, ոչ սէր և ոչ իսկ  
Աստուած, այլ պատիր սէր, սնոտի  
երջանկութիւն։

Ապրինք իմ սիրելի մայրերս, իմ  
պատուական քայրերս եւ իմ ազնիւ-  
աղջիկներ իրեւ մարդ։ և իրեւ կա-  
տարեալ մարդ և ևս իրը քրիստոնեայ  
մարդ։ արդեօք որբան հայհոյութեան  
տեղիք կուտան օտար աղգաց մեր այն  
յոլանի ձեւով, մեր այն կիսամերկ ըզ-  
գեստով շրջող կանայք և աղջկունք,  
արդեօք որբան ցանկութեան սեւ տո-  
ղերը կը գրումներ յանցանաց տոմարի  
մէջ, որուն մէկ հատիկ պատճառ մեր  
սնկուրած դէմքն է ու կիսարաց կուրծք  
և բազուկ, կ'աղացէմ թող տուէք այդ  
սնոտի շաւիղը իբրև մարդ կատարեալ  
խորհելով և զվահճանը մուածելով ը-  
րէք։

Զիմոռնամ այն մէկ հատիկ քաջա-  
յաղթ զրաւար և անոր քաջ սպանե-  
րը եւս յարացոց բերելու, այն քաջ  
մարդ Քարկեդոնի մէկ հատիկ դիւցազն  
է, ու Հռովմայեցւոց յաղթահար, Ա-  
նիբաղ մեծ, որն վեց հարիւր հազար  
օտարազդի մարդկանց բանակ անկըժ-  
տելի կերպով կը պահէր, այն աննկուն  
աղջը իւր քաջաքի մէջ կը փոսկէր իւր  
յաղթական ձայն Հռովմայեցւոց ին-  
կած ՚ի պատերազմի թիւ զիար, անոնց  
մատի մատանիք չափով Քարկեդոն

կ'երթար, իւր քաջ պատերազմները միշտ յսղթական էին, եղբ Կանի մէջ ձմերեց այս քաջ զօրապէտ այս մեծ մարդ, գիտես թէ իւր բանակով թակարթը մտաւ, այն է Կանի կանայք և կեր խումը վստթարացոց Անիբաղաց զօրաց միրտ և քաջութիւն: Ինչ զէնք որ յաղթելու կը գժուարանաց կանայք և ոգելից ըմսելիք կը յաղթէ, Սամսոնի Թալիլէն կը թողում: Ամաղէի աղջ ջիկներ իրենց հայրենեաց սիրոյ համար պղութեան կ'ուտային իրենք զիրենք ՚ի կորուստ Խարայելի, նոյն և Կանի Հը ուովմայեցի կանայք ՚ի թուլամորթութիւն Անիբաղեանց, Թալիլէն արդէն մահ աչքի դէմ ունէր որ այնպէս գրոնց այն ուխտեալ մարդ ուն հետ, իսկ իմ միրելի մայրեր, իմ պատուական քոյրեր, գուք, գուք մեր ընկճած եւ օրհասականի հետ կռուզ մէկ ափ մողվոդի հետ և անոր անկման կը ջունաք, գուք ուրեմն Սահականուշի, Շուշանաց, ուխտանուէր նահատակուած և շղթայուած նախարարաց տիկիներու, Տիգրանուհեցն Հայկանդըն տուց հարազատ աղջկներ չէք, գուք Հայու խմոր, Հայու զանկուած չէք, թէօր ես գիտեմ, էք. Հապա ինչու կը մոռնաք ընկերական դաստիարակութեան սուրբ դաս, ինչու կը մերժէք պարկեցութեան անդին զարդը, ինչու դաշնակցութիւն կը կապէք չարին հետ ոչ Խարայէլ. Անիբաղի բանակ և Սամսոն խսբելու ՚ի մեջ գլորելու այլ ձեր որդիք, ձեր հարազատներ և ձեր արինը. ո՛հ, ալ առաջ երթալու միրտ չեմնաց վրաս, լսցու հառաջանքս չի ներեր ալ խօսիմ, մի իմ միրելի մայրեր մի. մի իմ պատուական քոյրեր մի, երկներ և իւր արդարութեան բաղու կը արդէն մեզ համար շափեր և մը ըուր դառնութեան մեզ խմցուցած է, քանի անոր արդարութեան, որ անմեղ

տեղ տուած չէ այլ թէ շափեր է մը գործ ու տուած է: Հապա մայրերս, ծնքորերս անոր սուրբ և արդար ցասումը նորէն չը գրգուենք, արդեօք ՚ի միտ կ'առնելք ու կըզգուեք մնուելներու հիւասիրութեան կարօտ եղանք, ու անոնց գերեզմաններ վեհանձնաբար զմեզ ընդունեց ու մեր գթուտ Հայր Մէծ կայսր զմեզ կերակրեց, չեմ զիւեր թէ Սոդոմ և Նինուէ Քիրայէն աւելի հարուած կըցցին, որ լսելու ականջ ունի թող լսէ և ոյն հետ զհետէ կընդունենք անոր բարի ձեռքէն մեր չար արարմանց փախարէն:

Պ որկեցտութիւն, պարզութիւն, եւ ընկերական սուրբ սէր մեր ազգի ազնուական նշանն էր. իսկ այսօր մօտոն և Եւրոպան զանի կերպարանափակուեց, արդեօք դբամով պարել կայիմել սորուիլ ամօթ է, թէ անզրամ պարել կայիմել չըգիտնալ, արդեօք պարկեցտ հագնիլ հաստ գլուխ հնասէր երեւնալ լսւ է, թէ կիսամերկ պրկած շպարած մազեր հոլանի քալել բարակամիս նոր տարւոյս խտեայն մենիլ լսւ է, արդեօք ասեզով և պարկեցտ գործերով զբաղել լսւ է, թէ փիանօ արմօնիկ չալելավ զբօննուել. իմ գլուխ հին է ասոնց որը լսւ է չեմ կրնար զատել, նա մանաւանգ դրամով պար սորուիլ, կը թողում ծնողաց մտածել թէ անոր հետեւանք ինչ կը սորուի այն անմեղ կուսիկ, այն եկեղեցւոյ նորատունի ձիթենին, որ պէտք է իւղ սուրբ պտղաբերէ, գմնիկ բերելու կը մշակն, աւելի լսւ կը պատրաստեն իրեն լսւաւոր գաղափարի վիճակեալ ծնողը, ուրեմն այն դառնուիները անմեղ արարածներ իրենք կը գէցնին:

(Ըստ հայութիւն)

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ո՞հ, զի՞նչ դէմք գեղաւեսիլ և վաշելու չգոգցես հրեշտակիմն ՚ի մարմնի, որոյ չընսալ երեսք՝ լուրջ և զուարթ, յայտ առնեն զհոգււոյն սրբութիւն և վազնուականութիւն. վարսք իւր գեղածուփք գանգրեալք, ծածանին վարդագոյն յայտս իւր և անտի շնորհաշուք իմն թեքեալք զեղանին զուսովք և գեղածփին ՚ի քաղցրաշնչ զեփիւոիցն գարնանայնոյ : Խորհուրդք բազմահոգք և վիշտք գառնակսկիծք գեռչն ինչ խորշոմեցուցեալ զճուկստ նորինաչք իւր գոգցես իբրև զինիջ հայեցի զանմեղութիւն որտին ՚ի դէմս ածեն, զնոյն և ընդ նոսին այտք իւր վարդապեղք եւ քնքուշք, զորս մշրթ ընդմերթ հոպոսկիք իւր ոսկեթելք քուզարիկն : Հոգինորին ազատ յամենայն կանխակալ գատողութեանց, զգաղափարս ախորժու և եթ ըմառնէ. մարմին նորին չեւ եւս է խանարհեալ ՚ի ծունք առաջի գարշելի կրոյն ագահ հութեան, փառասիրութեան և այլ քաղմաթիւ ցանկութեանց. կասկածամութեանն աղետաբեր փոթորիկք չեւ եւս են խանգարեալ զուրք գաղփարս մասաց նորին, իսկ ախորժ ժանտաժուտ մղութեանց ոչ բնաւ գտանին ՚ի նմա տեղի հանգստեան, և զսրհուրանօք իմն փախչին և երկնչին խոկհպել ՚ի սրբութիւննորա, որպէս խաւարն փախչի սուզեալ յոշէութիւն ՚ի լուսաձաննչ ճառագայթից արեգակամն. աշխարհ համայն ծուփ նմա ծաղկաւէտ և դալուրագեղ իմն բուրաստան, որոյ զինքն կարծէ լինիլ թափաւոր և տիրող, ոչ ունելով երբէք զճաշակ լիտաց և նեղութեանց և տառապանաց կենցաղոյս : Ի հակիրճ բան, մանուկն զնմանութիւն նախաստեղից ընը բերէ յաշխարհի աստ, որք ՚ի դըրախտին զանմեղութեան կեանս վա-

րէին՝ անզիտակ ՚ի ծանօթութենէ բարւոյն և չարի, և զորս տէր և իշխան եղեալ էր Աստուծոյ ՚ի վերայ ամենայն արարածոց . և որպէս նոքա ոչ անսալով պատուիրանաց տեառն Աստուծոյ խաբեալ ՚ի խորաւանկ և ՚ի սրտայօդ բանից բանսարկութին՝ կորուսին զամենայն զիփառսն դպյնոսիկ, մերկացան ՚ի լուսեղին պատմնաձանէն անմենայն մեղութեան և զրկեցան յաստուածաւյին երանաշնորհ տեսութենէն . այնուիս և մանուկն պատրեալ յաշխարհոյն ցանկութեանց և զնոցին հրապուրանաց երթեալ զճետ, տակաւ առտակաւ կորուսանէ զամենայն ինչ զորունէն . զի իբրեւ զծուխ ցնդական ՚ի բաց գնան ՚ի նմանէ մանկական զուարձութիւնքն այնոքիկ՝ սուրբք և անմեղք. հեշտութիւնք և մղութիւնք թշնամիք գեղց, ուժոյ և կենաց մարդկան, եղծիչք իմացական կարողութեանց իբրեւ զմառախուղ մմին և իբրեւ զամպը թանձրամած ոչ տան թոյլ ցոլանալ ըստ բնաւորեալ պայծառութեն և տան բառնալ և կորուսանել զեօթնարիեան շնորհաց զնշցլս, որով հռգին մնայ ՚ի մմութեան, մարմինն իսկ իբրեւ խորչակահար ՚ի տապոյ եռանդեանն տոշորեալ բորբոքի ՚ի կատարումն իւրոց կրից. կորուսանէ զբարեկազմութիւն իւր և զվայելութիւն և տարաժամ խամրեցուցանէ զբանչելի գեղերեսացն . հալի իբրեւ զմոմ, և յետ համայնից իբրեւ շուշան չեւ և հասեալ ՚ի ժամ երեկոյին (ծերութեան) վողաթառամլինի, որով զրկի ոչ յայսըմ և եթ կենաց՝ այլ և ՚ի հանդերձելոյն . այլ կարէր զերծ լինել ՚ի չարեաց յայսցանէ պահելով զանմեղութիւն մանկական և ունկն զնելով պատուիրանաց իւրոց ծնողաց, հաւատուրիմ բարեկամաց եւ խոհական խրատասուաց, որք յաշախտակի ՚ի լութ նը-

յին գաստուածայինն երկարդեն զբան

Ապա յայտ յայսցանէ է թէ՛ ման կութիւնն գեղածիծաղ, հասախն անմեղ՝ ձշերիտ պատկեր է երջոնիկութեան, երջանկութեան՝ որում բազումք ի մարդկանէ ցանկանալով ցանկան և փափաքին, այլ ոչ կարեն հասանել այնպմ. զի որոնեն անդ՝ և յայնպիսի տեղիս՝ յորս անհնարին է գտանել. Նա իրեւ զնայելի՝ քնորհաց աստուածութեան զճառագայթմա յինքն անդրադարձուցեալ զոլացուցանէ: Աստուած խիկ մանուկ լինելով փառաւորեաց ըդ մեծութիւն և զնորհս անմեղ մանկութեան: Նա սիրել զմանկունս և օրհնէր զնոսա, վասն որսյ յանդիմանեաց իսկ զոմանս յաշակերտացն՝ որք ոչ թոյլ տային այնոցիկ յինքն մերձենալ. « Թոյլ տուք, ասէ, և մի արդելուք զդոսա գալ առ իս. զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»: Եւ որ մեծն է, նա քան զամենայն հասակս մարդկան զմանկութիւնն գերազանց կացոց, ասելով թէ՛ « Որ ոչ դարձի և եղիցի իրեւ զմանուկ, ոչ կարէ մտանել յարքայութիւն երկնից ո»:

Ցնծա՛ արդ և ուրախացիր ո՛ ման կութիւն որ գիտես կամ յաջողեալ իցես պահել միշտ զայդ շնորհ գերազանց, շրջեն շրջեալ հրապոյրք չար լիներաց զուարձացիր անտրոտում բերկրանօք և յաւերծ երջանկութեամբ, քանզի ազտուն միտք ՚ի չար խորհրդոց, հանդարտ է սիրտ ՚ի յուզմանց չար կրից, երթ զհետ Տեառն, որ կոչ զքեղ սիրով և քաղցրութեամբ, զբոշ լըր յամենայն առթից որք յափսուակել ժպրհին զանմեղութիւն քո, եւ երանի է քեղ եթէ մահու չափ ձգնետլ մինչ ցվախճան պահել կարեցիս զայդ սպարդեւ աստուածատուր:

Պօլոս Յ. Զանագ—Գալեցիք  
Աշա. Ժառ. • Վարդարանիք.

## ՃԵՄՄԱԿԵԳՐԱԿԵՐ

Տեղւոյս Սկզնէմի Հրէից Խախամագլուխը մի քանի տարի առաջ Ռուսաստան կ'երթոյ և Սինակոկի մը շինութեան համար վեց հազար լիրայի չափ ստակ կը հաւաքէ. կը վերադառնայ և նոյն շինութիւնը կ'առնէ. երկրորդ անգամ եւս կերթոյ տուաջին շինութեան մնացորդը լրացնելու պատրուակաւ մօտ երեք հազար լիրա կը ժողովէ. սյա տեղ կուգոյ անձնական չենք մի կը կառուցանէ իրը Եկամուտիւր շինած Սինակոկին: Տեղս գտնուող Հրէայք, որք զմնաղան տէրութեանց հպատակ են, իմանալով գործուած նենգութիւնը, կը հեռագրեն Ռուսաստան և կըստուգեն Խախամագլուխին բերած ստակին քանակը. յետոյ կը բողոքեն Հիւպատոսաց և նոյնազդիցութեամբ բանտարկել կը տան ներկայ ամսոյս մէջ կառավարութեան դուռը և ցարդ բանսն է:

— Բեթեհէմի վերջին անցից առթիւ Տէրութեան կողմանէ Յունաց Վանուց տեսուց փոխուեցաւ և լրամաճնոււ նայելով պիտի փոխուին նոյն պէս Լատինաց Վանուց Տեսուց, Խոստովանահարը և վարժապեալ մի եւ նոյն առթիւ:

— Ամացօ 22ին Բ. դռնէն եկած հեռագրոյն համաձայն տեղոյս կառավարութիւնը Յունաց Աւագ թարգմանը բռնել տալով հազարամետին կը տայ. և նա մօտ երեսուն զինուորով Յոստաէ կիշեցնէ և անոփ շոգենաւ դընելով ՚ի Պօլսա կը տանին. տակաւին ասոր ստոյդ պատճառը ըստ գիտցուիր:

— 28ին Գեր. Կարապէտ Ս. Եպիսկոպոսը Դամոսկոս զրկուեցաւ Ս. աթոռոյն կողմէն նոյն տեղուոյն ժողովը լիրդեան հոդեւոր միմիթարութեան և մանաւանդ նորացն Ս. Սարգիս Եկեղեցւոյ օճման համար:

# ՑԱՆԿ

## ՅԱՒՆԻՍ

Մարդուս հոգւսին ներդաշնակ կրթութիւնն .	121
Հարցաքննութիւն և հանդէս պարգեւաբաշխութեան .	126
Ճառ .	127
Բարցյական .	130
Դաստիարակութիւն կանանց .	140
Մանկութիւն .	143
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .	144

## ԲԱԺԱՆՈՐԴՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա . Ականք ամեն կը հրատարակուի ԶԱ երեսէ բաղկացեալ մեկուկես  
ութածալ թզմավ .
- Բ . Տարեկան զինն է երկու արծաթ ԱԷՇիտիցէ . հանգերձ ճանապարհի  
ծախրովը կանխիմիկ վճարելի :
- Գ . Զատ տետրակ առնել ուղողը : ողեար է ամեն մէկ տետրին չորս գա-  
հեկան վճարել :